





ԴՆԲ
Ժ. ՏԱՐԻ


Տպիս

ԼՍՐԻԱԾԻՆ

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱՆՆԻ

V

1953



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Կալիֆորնիո հայոց թեմի առաջնորդ Բարձրապատիվ տեա Շնորհիվ վարդապետ Գալստյանին և համայն հոտին	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ցավակցությունը աղաղակիկոս Հրաչյա Անադյանի մահվան առթիվ	7
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու 125-ամյակը	8
Մայր Աթոռի վիճակը պարսկա-թուրքական տիրապետության տակ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման նախօրյակին	12
Ներսես արքեպիսկոպոս Աղտարակեցու կոնգակը Արևելյան Հայաստանի ազատագրության առթիվ	15
ՊՐՈՖ.-ԳՈԿՏ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ.— Վավերագրեր 17-րդ դարի հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից	21
ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿԱՎԱԳ.— Ներսես Աղտարակեցու կատարած խոշոր դերը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում	31
Գիտական սեսիաներ՝ նվիրված Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելու 125-ամյակին	39
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Հովհաննես Թումանյանի տուն-քանդակը	42
Գ. Հ. ՌԱԶԳՐԱՏՈՒՄՅԱՆ.— Բուլղարահայերը	47
Ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Անադյանի մահը	50
Բիբլիոգրաֆիա Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Հրաչյա Անադյանի տպագրված և անտիպ աշխատությունների	57

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱՆՆԵՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱՇԻՆ

«ԷՋՄԻԱՇԻՆ» ՄՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Ереван, Редакция журнала „Етчимадзин“

Redaction of the magazine „Etchmiadzin“, Etchmiadzin, Armenia, USSR

Հ Ր Ա Ս Ա Ն Ա Ի

Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՐԴ,

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՐ՝
ԿԱԼԻՏՈՐՆԻՈ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ ՏԵՐ ՇՆՈՐՀՔ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ
ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀՈՏԻՆ

ԳԵՌԴԳ ԵԱԹԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՈՒ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԵԱՅՐԱՊՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ
ՆԱԽԱՄԵՄԱՐ ԱԹՈՒՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԻ ԷԶՄԱԾԵՆԻ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՏՈՐՆԻՈՅ՝ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՒ ՏԵՐ ՇՆՈՐՀՔ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԱԼՍՏՅԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀՈՏԻՆ ՄԵՐՈՒՄ ՈՂՋՈՅՆ
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մանր և պատասխանատու ժամանակներ ենք ապրում, անհրաժեշտ է հասկանալ ժամանակի ոգին և պահանջները, ինչպես նաև շփոթանալ մեր պարտականությունները հանդեպ Եկեղեցու և Ազգի: Ձափազանց մեծ զգուշավորություն և արթնություն է պահանջվում, որպեսզի մեզ հանձնված նավը դեկավարենք ուղիղ և ճշմարիտ նախապարհով, խաթառաւ լինելուց զերծ մնանք և ապահով նավահանգիստ հասնենք:

Ո՛րն է մեր ընթանալիք ուղին: Այս հարցի պատասխանը թելադրում է մեզ ժամանակը և մեր պատմական փորձառությունը: Ներկա ժամանակներում շատ է կիրառվում «Բաժանեա՛ր գի տիրեսցես» սկզբունքը: Այս սկզբունքով դեկավարվում են քրիստոնեական ռոշ էկեղեցիներ, հակառակ այն քաղին, որ Փրկչի Ավետարանը դատապարտում է այդ սկզբունքը՝ «Ամենայն քաղաքություն թաժանեալ յսնձն՝ ամբի, և տուն թաժանեալ յանձն՝ կործանեա՛ր» (Դուկ., ԺԱ 17), և հատկապես Կաթողիկ Եկեղեցին, և որ ցավալին է՝ Հայ Կաթողիկ Եկեղեցին՝ ի դեմս ներկա կրոնապետի, վախճանակ օգտվելով ժամանակից ու հանգամանքից, ազգային միություն փառագելու՝ հետևելով իր ազգասեր նախահոր՝ Մխիթար Աբրահամ օրինակին, քանի որ ազգային միությամբ է, որ հայը, իբրև ազգ, ուրույն և անկախ կարողացել է ու պիտի կարողանայ ապրել աշխարհիս երեսին, այնինչ կրոնական միությամբ՝ արագանում է ազգի ձուլման և անկախության ժամանակը, ինչպես ապացուցել է Հայ Ազգի և Եկեղեցի-

ցու անցյալ պատմությունը, որ և հանդիսանում է Վատիկանի և Նորա սպասավոր՝ Հայ Կաթոլիկ եկեղեցու պետի՝ «հայ ժողովրդի բարեկամ»ի քուն նպատակը:

«Ռաժանեա՛ զի տիրեսցես» պատակառդական սկզբունքը, ինչպես առաջ, հույնպես և այժմ, մանր ազգերի նկատմամբ, եղել է և է մեծ պետություններից ումանց ֆաղափականությունը, որից պետք է զգուշանալ:

Հայ եկեղեցու պատմությունը գտել է այդ շարիֆի սպեղանին: Ս. Լուսավորչից սկսած՝ Հայ եկեղեցին միշտ մտահոգված է եղել հայ ժողովրդի ազգային անկախ և ինքնուրույն գոյությունը պահպանելու հարցով: Ս. Լուսավորիչը՝ տեսնելով որ հեթանոսությունը այլևս չունի հավատո այն կենտրոնածիր դպր, որ ընդունակ է, ժողովրդին իր հետ գողելով, ստեղծել անբաժանելի ու անպառակտելի ազգային միություն, նոր ուղի որոնեց և գտավ. ֆրիստոնեությունն էր այդ նոր ուղիք և այդ նոր ուղին: Ազգի Լուսավորիչը ֆրիստոնեական կրոնի լուսավորեց հայ միտքը, ֆրիստոնեական վարդապետության սիրո կրակով վառեց ու ջերմացրեց հայի սիրտը, և այսպես՝ հավատով և ֆրիստոնեական կրոնի բարոյական վսեմ գաղափարներով շողկապեց հայ ժողովրդին, ամրապնդեց Հայ Ազգի միությունը և անխզելի ու անբաժան դարձրեց այն: Այս միությունը առավել ևս զօրացավ, երբ ֆրիստոնեությունը՝ Ս. Լուսավորչի և Տրդատ Նորոգի ջանքերով, Հայաստանում ազգային-պետական կրոն հռչակվեցավ:

Ս. Լուսավորչի ծրագրած չորրորդ դարու եկեղեցու այս գաղափարը՝ հինգերորդ դարում զարգացրին ու հասունացրին Հայ եկեղեցու երկու սյուները՝ Մ. Սահակն ու Ս. Մեսրոպը: Ս. Լուսավորչի դավանական, նվիրապետական ու վարչական տեսակետներով կազմակերպած եկեղեցուն պակասում էր հայ զիր, հայ գրականություն, հայ դպրոց և՛ դպրոցների ու եկեղեցիների համար՝ հայ պաշտոնեություն, որպեսզի Ազգը, եկեղեցին ու դպրոցը ազատվեին հույն և ասորի լեզուների, գրականության և օտար պաշտոնեության տիրապետությունից, որ Ազգը՝ մտավորապես և դպրոցը՝ ազգայնապես զորանային ու անկախանային: Ս. Սահակի և Ս. Մեսրոպի անդուլ ջանքերի շնորհիվ է, որ հինգերորդ դարի Հայ եկեղեցին՝ իր մտավորապես զարգացած, ազգային ոգով դաստիարակված և Ազգին ու եկեղեցուն նվիրված հոգեօրականությամբ վճռականապես և հաջող լուծեց ժամանակի խոշորագույն պահանջ հանդիսացող հիշյալ խնդիրը. որով հայության համար ազգային ինքնուրույն և անկախ գոյության պայմաններ ստեղծվեցին և Հայ Ազգը, որ ժամանակի ֆաղափական ու կենցաղական պայմանների հետևանքով փռնվում էր անէացման սպառնալիքի և ստույգ ոչնչացման վտանգի առաջ, ազատվեցավ և փրկվեցավ:

Հայ եկեղեցու իմաստուն ու խնկելի՝ և Ազգի ու եկեղեցու կողմից սրբացյալ հայրապետների այս ծրագիրն և ուղին Հայ եկեղեցու և Ազգի պատմությունը վավերացրել է և որպես պատմական ավանդ ու պարտականություն բողբել թե՛ հազարակամության և թե՛ ժողովրդին հառաջնորդություն:

Գաղութանայ ժողովրդի ներկա կյանքի պայմանները շատ նման են հայ ժողովրդի անցյալի պայմաններին, ուստի և այսօր էլ Հայ եկեղեցու և Նորա ղեկավար ու առաջնորդ հոգևոր անձանց վերա, որոնց բովում հաև Ձեզ վերա, Բարձրապատիվ Շնորհ Հայր Առաք, ծանրանում է պարտականություն՝ պահպանելու Հայ եկեղեցու իմաստուն և խնկելի հայրապետների ծրագիրն ու ավանդը և այդ ուղիով առաջնորդելու Ձեզ հանձնված պատվական ժողովրդին: Մի ծրագիր և մի ավանդ, որ Հայ Ազգի պատմությունը վավերացրած է և որով լինեն էլ ցայսօր առաջնորդված:

Ամփոփելով Մեր խոսքը կասենք՝ որ հիշյալ ծրագիրն ու ավանդը պատկանություն են դնում Հայ եկեղեցու և նորա ղեկավար հոգևորականության վերա՝ պահպանել Հայ եկեղեցու միասնականությունը՝ պահպանելով նաև Հայ Ազգի միությունը։ Բացառել նոցա անհրաժեշտությունը Հայ Ազգի գոյության պահպանության համար, այլև, ի կարևոր դեպս, պաշտպանել այն ֆառուսն և գրչով։ Վառ պահել հայ ժողովրդի մեջ ազգային և կրոնական ոգին՝ նկատի առնելով տեղական պայմաններն ու հանգամանքները։ պատկերել Հայ եկեղեցու արժանիքները, որոնք հանաչված և գնահատված են օտարներին և ստույգ պատկերացված մերայիններից։ նկարագրել Հայ եկեղեցու կառարած ու կատարելիք դերը ազգային ինքնագիտակցությունը զարթեցնելու և զարգացնելու նկատմամբ և այլն։

Ազգի՝ հատկապես գաղութահայության, ինքնուրույն գոյության պահպանության համար անհրաժեշտ է նաև մայրենի լեզուն։ Ընտանիքն է այն օջախը, որ պահպանում է մայրենի լեզուն։ հայ կիներն է, որ իր նազանքով և օրորոցի անուշիկ երգով հաղորդում է իր սիրասուն զավակին մայրենի լեզվի անուշիկ հնչյունները որպես նախապատրաստություն։ Հայ կիներն է, որ հետքահետն ուսուցանում է իր մանկիկներին մայրենի լեզուն, ազգային սովորույթները և եկեղեցական ավանդությունները, որով սկիզբ է առնում ազգային ինքնագիտակցությունը։ Ազգային լեզվով է, որ հայ երիտասարդը և ընդհանրապես հայ մարդը հնարավորություն է ստանում հանաչելու իր Ազգի անցյալը, կառուցել իր պատմությունը։ իմանալու իր հախնյաց առաքինությունները, նոցա հանճարեղ ստեղծագործությունները, նոցա սխրագործությունները, նոցա հերոսական ոգին և վերջապես՝ անձնական տառապանքների զնով, նոցա մասնացած ծառայությունը քե՛ր իրենց ազգին և քե՛ր մանավանդ օտարներին, ինչպես խոստովանում են օտարներն իրենք։ Ահա այս բոլորի շնորհիվ է, որ անհատը սիրել է սկսում իր Ազգն ու Հայրենիքը։ Վերահիշյալից պարզ է, որ հայ ընտանիքի համար՝ անհրաժեշտ է մայրենի լեզվով խոսող հայ մայր, և հայ դպրոցի համար՝ հայ ոգի շնչող և հայ լեզվով դասախոսող հայ ուսուցիչ։ Այս պետք է միշտ հիշեն մեր բոլոր առաջնորդները և իրենց ֆառուցների ու նոգածության նյութ դարձնեն։ Այս պետք է երբեք չմոռանա նաև հայ ժողովուրդը, մանավանդ գաղութահայությունը, երբ նա կամենում է իր ինքնուրույն ազգային գոյությունը հավետ պահպանել, անձույլ մնալ և իբրև Հայ Ազգ ստեղծագործել։

Այո՛, պետք է սիրել իր մայրենի լեզուն, իր Ազգն ու Հայրենիքը, քայքայել է հարգել նաև օտարին, մանավանդ այն օտարին, որի հետ ապրում և հայ ժողովուրդը։ Եվ ո՛չ միայն պետք է հարգել օտարի լեզուն, այլև նեւամուտ լինել սովորելու և տիրապետելու օտարի լեզվին՝ իր մտավոր պաշարը հարստացնելու, իր աշխարհայացքը ընդլայնելու համար։ Պետք է հարգել նաև այն իշխանությունը, որի հովանին վայելում է հայ ժողովուրդը, առանց սակայն անտեղի ու անպատշաճ սիրաշահումների, ինչպես նաև առանց մոռանալու իր Ազգի ու Հայրենիքի շահերն ու իրավունքները։

Գաղութահայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը պահպանելու և ազգային անկախ և ինքնուրույն գոյությունը պահելու տեսակետներով՝ անհրաժեշտ է նաև Հայրենիքի գաղափարը կենդանի պահել ժողովրդի հոգու մեջ և սեր վառել ու բուրբոնել հանդեպ նորա։ Հայրենիքը այն վայրն է, որ պահում է Ազգի նյութական ու հոգեկան ստեղծագործությունները։ Հայրենիքը այն վայրն է, ուր ապրում են գաղութահայության արեւակից եղբայրները, որոնք աշխարհիս երեսին միակ հարազատներն են, որ անկեղծությամբ հա-

վառարմությամբ ու իրենց պատմական անցյալով անխզելիորեն կապված են և անհամբեր ակնկալում են գաղութաճայ բոլոր հատվածների վերադարձին, որ գրկարաց ընդունեն նոցա:

Հայրենիքը այն վայրն է, ուր ի վերջո պիտի վերադառնան՝ Հայրենիքից դուրս, աշխարհի ամեն կողմը ցափուցրիվ ժամանակավորապես հաստատված Ազգի բեկորները, որպեսզի Ազգը միանա և ամբողջանա՝ և՛ իրեն ամբողջական Ազգ, ստեղծե լեզվի, մտածելակերպի և հոգեբանության միություն, ևս առավել զարգանա տնտեսապես ու կուլտուրապես և շարունակե ազատ ու երջանիկ ապրել:

Հայրենիք ունեցող ազգը, որպեսզի կարողանա ինճնություն և անկախ ապրել և իր հոգեկան ուժերը ազատորեն դրսևորել ու զարգացնել, պիտի ունենա նաև ազատ ու անկախ Հայրենի Պետություն: Հայությունը այսօր բախտավոր է, որ ունի նաև ազատ ու անկախ Հայրենի Պետություն, որ ապրում է իր ժողովրդի համար, որ միաձուլված է իր ժողովրդի կուլտուրական և տնտեսական զարգացման հոգսերով, որի արդյունքը հրապարակի վերա է և չի կարոտում ապացույցի, զի այն տեսանելի և շոշափելի է ամենին՝ «Ուր ունիցի ականջս լսելոյ՝ լուիցե» (Մատթ., ԺԳ 43) և ակն տեսանելոյ՝ տեսցէ:

Մի իղծ եմ ունեցել պատանեկությանս օրերից, որ ժամանակի բերացում զարգացել ու զօրացել է և հետզհետե իրականացնելու համարի վերա է եղել: Իսկ այսօրվա իրականությունը մեծագույն հույսն է ներշնչում Մեր՝ քե՛ս Մեր թղծի և հույսի իրացման ժամանակը մոտեցել է: Մեր իղծը եղել է՝ Հայրենի ներկում, Հայրենի հարազատ Պետության նովանու ներքո տեսնել Ազգի բոլոր քեկորները ներգաղթած, կենտրոնացած, միացած ու ամբողջացած և լծված Հայրենիքի կուլտուրական ու տնտեսական կյանքին, տեսնել Ազգի ամբողջական կյանքը Հայրենի ներկում ազատ ու անկախ և խաղաղ ու երջանիկ... և փառք տալ ու աղերսել Բարձրալիքին՝ «Արդ արձակեա զժողայս քո, Տէ՛ր, ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն Ազգի իմոյ, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց»:

Ավարտելով Մեր խոսքը՝ մաղթում եմ մարդասեր Փրկչին, որ հիշեցնե հայ հոգեւորականության, մանավանդ բարձր հոգեւորականության և հայ ժողովրդին թե՛ նկեղեցիով պահվել է Ազգը և Ազգով պաշտպանվել նկեղեցին: Այս պատմական հշմարտության հետևանքով է Ազգի և նկեղեցու անբաժան միությունը, և այս է այն հիմքը, որով հայ ժողովուրդը ազգայնապես ցայսօր ապրել է և ստեղծել իր լայն մշակույթը:

Մաղթում եմ Բարձրալիքին, որ անցյալի փորձը միշտ իբրև հուշարար դաս հանդիսանա ապագայի նկատմամբ՝ թե՛ մեր փարոզիչ առաջնորդների և քե՛ս՝ մեր ունկնդիր հավատացյալ ժողովրդի համար:

Ողջ լերում, զօրացեալ ի Հոգւոյն Արքայ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ Լ ի Մէնջ. ամէն:

Գեորգ Զե

ՆԱԽՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ, ՀԱՅՈՑ

Տուա՛ւ զանդակս յՑ-ն ապրիլի

1953 Փրկչական ամի, և ի տուժարիս Հայոց Ռին:

Երեւանում ամի Հայրապետութեան Մերոյ,

ի վառս՝ Արքայ Եւփոծնէ:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԸ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱՋՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ**

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊԱՏՎԱՐԺԱՆ ՎԱՐՋՈՒԹՅԱՆՑ**

Հայագիտական և եկեղեցական լուսավորչական շարժումներից մեկն էլ ժամանակակից հայագիտական մեթոդներից հրաշակված՝ ակադեմիկոս լեզվագետ Հրաչյա Անադյանը։ Նա չէ մանացել, այլ՝ իր գիտությանը և Արմատական բառարանի նման իր քաղաքային արժեքավոր երկերով՝ անմահացել է։ Նորա հոշակը ևս առավել կրթաճանաչող, նոր հորա երկասիրությունները քաղաքական են օտար լեզուներով և լույս տեսնեն նորա քաղաքային արժեքավոր աշխատությունները և գիտական աշխարհին մատչելի դառնան։

Գիտության մշակը եղել է նաև Ազգի մշակ։ Երև մեր գրասեր ու ջանասեր ճախնիք մշակել ու զարգացրել են հայ կուլտուրան, որով յուրայնոց սերն են շահել և որով հայր օտարների հարգանքն է վայելում, ուսկա՝ հոգա ներկա ժողովուրդներն են Գիտությանց հեմարանը և Հայ համալսարանը՝ Անադյանի նման հայագետներով։ Երև անցյալում հայ մեղվաչան մասնագիտները զարթեցրել ու զարգացրել են հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, որի շնորհիվ և պանծանել հայ ժողովրդի ազգային ինքնությունը և անկախ գոյությունը, ուսկա՝ հայր հոգա ժողովուրդներն են Գիտությանց հեմարանը և Հայ համալսարանը՝ Անադյանի նման իրենց գիտնականներով, որով գիտության մշակները յարձել են նաև Ազգի մշակներ։ Փառք և պատիվ՝ հոգա։

Հայ գիտության և Հայ Ազգի մեծ մշակ և Մեր անձնական սիրելի բարեկամ Հրաչյան կատարել է իր պարտքը հանդես հայագիտության և Հայ Ազգի, որով և անմահացել է։ Նա ոչ միայն ապրում և ապրելու է իր գիտությամբ և բողոք էրկերով, այլ հավետ պիտի ապրի Ազգի կենդանի հոգու մեջ և լուսնորա շողորմիսը։

Հայտնում ենք Մեր խոր վիշտը Հայ գիտությանց հեմարանի և Հայ համալսարանի պատվարժան վարչությանց՝ հոգա՝ դժվար փոխարինելի կորստյան առթիվ՝ ի դիմա հանգուցյալ Հրաչյա Անադյանի, և Մեր մխիթարանքը՝ նորա վշտահուստը բնուսնիքին։

94. 11. 27

**ԾԱՅՐԱԳՈՒՆՆ ԴԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ 125-ԱՄՅԱԿԸ



անը է եղել բազմաշառչա՜հայ ժողովրդի անցյալը: Գըտնրվելով Արևելքի և Արևմուտքի խաչածեղ փառալու վրա, Հայաստանը հաճախ է ենթարկվել նվաճողների ավերիչ հարձակումներին: Մեկ անգամ չէ, որ օտաւերկրյա հափշտակիչները փռնել են Հայաստանի ծաղկուն փաղափները և գյուղերը, կոյուպաները քանդելով և հագորհնելով գետի տարել: Հայաստանի ավերումների սովորական պատկերը շատ ցայտուն տվել է առաջ աշխարհագիր Ալ-Ֆակիին Ալ-Համադանին: «Ես գտա գրեհում, — գրում է նա, — որ Մեկկան ավերում են հաբեշները, Մեդինան՝ սովը, Բասրան՝ ջրհեղեղը... Ինչ վերաբերում է Հայաստանին և Աղբթեջանին, ապա այդ երկու երկրները տրոհվում են բանակների ձիերի սմբակների տակ...»:

Հայ ժողովրդի անցյալի տառապանքների պատմության մեջ, սակայն, ամենից ծանր, ամենից մղձավանջայինը եղել է պարսկա-բյուրական տիրապետության արյունառ շրջանը: Պարսկական և բյուրական բռնակալության երկաթե լուծը, հետամնաց կարգերը, ֆիզիկական ու քառյակա՜ն խռչտանգումները հայ ժողովրդին հասցրել էին խորատակման եզրին:

Ժամանակակիցները ամենամոռ ցույցերով են պատկերել պարսկական ու բյուրական տիրապետության տակ ապրող հայ ժողովրդի ֆաղափան և տնտեսական ողբալի վիճակը: Ձկա 17—18-րդ դարերից մեզ հասած մի ձեռագիր կամ վավերագիր, որից կարելի չլինե՜ր լսել ժամանակակիցների ողբի ծայրը: «Եթե թղթի վրա գրելու լինե՜նք այն հնչումները, որ մենք կրում ենք, — կարդում ենք մի վավերագրում, — ապա ոչ թուղթը կբավի և ոչ թանափը»:

Հայ ժողովրդի կրած տառապանքները պարսկա-բյուրական տիրապետության այս ծանր շրջանում արցունքով է նկարագրել անմահ Արսվյանը իր «Վերջ Հայաստանի» վեպի մեջ: «Քեզ չկա մեռ երկրում, քո չկա, որ հայի արե՜նով ներկած չլի... — գրում է նա, — աղբի՜ն ասես՝ ֆաշում էին, աղեն ասես տանում, շատ անգամ հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, ճահա՜տակում, ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղորջաղը»:

Հայ մարդը իր գույքի, իր պատվի տերը չէր: Նա ամեն բոլոր կարող էր զրկվել իր ունեցվածքից: Թյուրք և պարսիկ իշխանավորները կարող էին խլել նրա կիներ կամ աղջիկը՝ այս կամ այն խանի հաբեմը տանելու համար: Կարող էին խլել վանկա՜մասակ տղան՝ համալրելու եհիչե՜րիների գործամուրը:

Ազատասեր հայ ժողովուրդը, սակայն, ստիպւեց չէր տանում իր հարստահարչներին լուծը: Նա իր քախտակից վրացի և ադրբեջանցի ժողովուրդների հետ դաշնակցած, կյանքի և մահու պայքար էր մղում իր ազատության, իր անկախության համար: Մեր ժողովուրդը, հակառակ իր ապրած դառն վիճակի քյուրմախան և պարսկական տիրապետության տակ, երբե՛ք անձնատու՜ չի եղել հուսահատության: Նա խորը հավատով է նայել դեպի իր ապագան, դեպի իր փաղափակա՜ն-կույտուրական վերածնությունը: Մեր ժողովրդի լավատեսությունը, առկունությունը և աշխատասիրությունը երաշխիք են հանդիսացել նրա կենսունակության:

Ի վիճակի չգտնվելով հաղթանալու պարսկա-քյուրմախան տիրակալների կազմակերպված ուժերը, հայ ժողովուրդը, նրա փաղափակա՜ն դեկավրանները, հաճախակի դիմում էին այս կամ այն ֆրիտոնյա պետությանը և նրանից օգնություն խնդրում. նրանք փնտրում էին մի սրտացավ բարեկիսմի և հավանավորապէս:

Իրենց որոնումների ճանապարհին, հայ փաղափակա՜ն գործիչները հաճախ առիթ են ունեցել փորձելու շատերին: Նրանք օգնության համար մի շարք անգամներ դիմել են արևմտա-եվրոպական պետությունների՝ Անգլիային, Ֆրանսիային, Պրուսիային և այլ պետությունների ու խնդրել նրանց՝ գալ և ազատել իրենց խորտակումից: Բայց այդ պետություններն ամենաանխիղճ ձևով օգտագործել են հայ ժողովրդի դժբախտ վիճակն իրենց դիվանագիտական խաղերի համար. նրանք ո՛չ միայն չեն օգնել հայ ժողովրդին, այլ Թյուրքիայի և Պարսկաստանի դեկավար շրջանին հրաճել են հայերի դեմ: Հայերը Արևմուտքի դիվանագիտական զայլերից ծուկ են խնդրել, իսկ նրանք ձկան տեղ օձ են ավել հայ ժողովրդին:

Քաղաքական անկախությունը կորցրած, պարսկական և քյուրմախան բռնակալությանց լծի տակ տառապող և կենսափորձով իմաստնացած հայ ժողովուրդը իր ազատության հույսերը ամբողջապէս կապել է Ռուսաստանի հետ, ոռսս մեծ ժողովրդի հետ: Հայ ժողովուրդը, որը գալիս է դարերի խորհից, որը ստեղծել է կուլտուրական ան-

կորնչելի և մնայուն արժեքներ, ոռսս ժողովրդի մեջ է միայն տեսել իր մեծ բարեկամին և ազատարարին:

Հայ և ոռսս ժողովուրդների պատմական բարեկամությունը մի եօր ու լուսավօր էջ և բացել հայ ժողովրդի պատմության մեջ: Իր պատմության ամենածանր ու ճակատագրական բաղեներին, ամեն անգամ երբ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցն է դրվել օրակարգում օտար բռնակալությունների կողմից, ամեն անգամ երբ սօր էն բարձրացրել մեր ազատության և անկախության վրա, հայ ժողովուրդը իր նայվածքը սրտառուշ հավատով ու վստահությամբ հառել է ճյուսխի իր մեծ եղբօր վրա:

Հայ մելիքների և ոռսսական արհուիքի միջև յուրջ բանակցություններ են վարվել Պետրոս I-ի օրով: Սակայն Պետրոս I-ի Պարսկական արշավանքը չբերեց սպասված ազատությունը հայ ժողովրդին, օրովնեռն Անդրկովկաս մտնող ոռսսական զօրերի առջև միայն պարսկական զինված ուժերը չէին, այլ նրանց քիկուեմում կանգնած արևմտյան եվրոպական ռոռչ երկրների զօրաբանակները:

Հայ և ոռսս հարաբերությունները իրենց զարգացման նօր վուլի մեջ մտան Յկատերիների օրով: Անդրկովկասը օսմանյան և պարսկական լծից ազառազրելու ոռսսական արհուիքի ծրագիրը չէր հակասում հայ, վրացի ու ադրբեջանցի ժողովուրդների փաղափակա՜ն շահերին: Տնտեսական, փաղափական բացարձակ բայանի, կելեմման, հարստահարության մատնված հայ ժողովուրդը, առանց վերապահության, իր ազատագրությունը կապում էր Ռուսաստանի հետ:

Հայ ազատագրական շարժման ակաճավօր գործիչները՝ Իսրայել Օրին, Շահամիր Սուլթանում Շահամիրյանը, Արդուրյանը, Աշտարակեցին և մյուսները հայ ժողովրդի ազգային ազատագրության իրենց ծրագրերի իրականացումը չէին պատկերացնում առանց Ռուսաստանի: Այդ շրջանում, ի դեպ, հայ և ոռսս ժողովուրդների բարեկամության կոփման և ամրապնդման գործում մեծ աշխատանք է կատարել ոռսս ժողովրդի փառապանծ գավակ Սուվօրովը:

Հայ և ոռսս ժողովուրդների առևտրական, փաղափական, կուլտուրական մերձեցումը

իր կոնկրետ արտահայտությունն է գտել դեպի Ռուսաստան կատարած հայ ժողովրդի զանգվածային գաղթերի մեջ: Հատկապես քյուրֆական և պարսկական բռնակալություններից փախչող հայերը կյանքի, պատվի, ինչքի ապահովություն, հավատի ազատություն, բարոյական հանգստություն են գտել Ռուսաստանում:

Անդրկովկասը, այդ բովում և Արևելյան Հայաստանը վերջնականապես միացվեց Ռուսաստանին միայն 19-րդ դարի առաջին հատորին. 1827 թվականի ապրիլին գրավվեց էջմիածինը, հոկտեմբերի 1-ին՝ Երևանը, իսկ 1828 թվականի փետրվարի 10-ին կնքվեց Քյուրֆմենչայի զաջնագիրը, ըստ որի Արևելյան Հայաստանը անցավ ռուսական տիրապետության տակ:

Ռուս զորքերի հաղթական մուտքը Հայաստան հսկայական ռզոտությամբ բնդունվեց հայ ժողովրդի կողմից: Մեր տանջված ու կեղեքված ժողովուրդը, ըստ ականառեսների վկայության, «անկաշառ հիացումով», «սրտառույ խանդավառությամբ» է դիմավորել ռուս ազատարար բանակին:

Մեր նոր գրական լեզվի և հայ նորագույն գրականության հիմնադիր մեծ հայրենասեր Աբովյանը ռզոտությամբ գրում է այդ առթիվ. «Օրհնվի էն սհաթը, որ ոսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ և ղզլբաշի անիծած շար շունչը մեր երկրից հալածեց... Խաստառ մեա ոսի խաղաղությունը, որ մեր ազգն ու աշխարհքը գերությունից ազատեց»:

Աբովյանի պես էր մտածում ամեն մի հայրենասեր հայ:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պատմական խոշոր իրադարձություն է հայ ժողովրդի կյանքում: Նա մեծ ու բախտորոշ նշանակություն է ունեցել մեր ժողովրդի հակառակ դեմք: Այդ օրից հայ ժողովուրդը իր ներկան, իր ապագան միանգամ ընդմիշտ կապեց ռուս մեծ ժողովրդի բախտի և հակառակ դեմք, նրա ներկայի և ապագայի հետ:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումը հայ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական բնաջնջումից և տնտեսական, կուլտուրական զարգացման լայն հանապարհի վրա կանգնեց: Ռուս ժողովուրդը իր կուլտուրա-

լով, գրականությամբ, արվեստով, անհամեմատ ավելի բարձր էր շահական Պարսկաստանից և սուլթանական Քյուրֆիայից: Հայ ժողովուրդը ճանաչվածություն ունեցավ մոտից հաղորդակից լինելու համաշխարհային նշանակություն ունեցող ռուսական կուլտուրային, որն, իր հերթին, շատ բարեբար ազդեցություն ունեցավ հայկական կուլտուրայի հետագա զարգացման վրա: Մեր նուագույն շրջանի մեծագույն գրողները, արվեստագետները կապված են եղել մեծ բարեկամությամբ ռուսական առաջավոր կուլտուրայի, գրականության, արվեստի մեծանուն գործիչների հետ:

Հայ ժողովուրդն իր հոգու, սրտի, մտքի բոլոր թելերով կապվեց հյուսիսի իր մեծ, հարազատ Լոբոն, ռուս ժողովրդի հետ, «որի մարդասիրության շնորհիվ ապագածներն էլ է կակղացնում... և որի անունը միայն ներշնչում է ամենիին, մինչև իսկ օտարին»՝ սեր և անձնվիրություն:

Հայ ժողովրդի վերջին Լեկու դարերի պատմությունը պերճախոս վկան է այդ անձնվեր և հավատարիմ զգացման:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման գործում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին պատիվ դիտողի դերում չի ցանկել: Նա իր գործուն աշակցությունն է ցույց եկել իր ժողովրդի ազատությանը, որը գեներ վերցրած ֆաշաբար կովում էր պարսկա-քյուրֆական հարստահարիչների դեմ իր ազատագրության համար: Ժամանակակից նիւրեմ կաթողիկոսը, Արևելյան Հայաստանն ազատագրելու նախօրյակին տեղափոխվելով Հաղպատի վանք, որը գտնվում էր ռուսաց տիրապետության տակ, համարձակ հռչակել, որտի է հանել հայ հայրենասեր շրջանը և գործուն օգնություն կազմակերպել Հայաստան մտնող և ընդամուրդեմ կովող ռուսական ուժերին:

Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, այդ վառվորուն հայրենասերը, արել է կարելին՝ փութացնելու Հայաստանի ազատագրությունը ռուսների օգնությամբ: Հայտնի է անգամ, որ 1827 թվականի սմոտեր, էջմիածինը պարսիկների կողմից շրջապատված ժամանակ, Ներսես Աշտարակեցին ինքն անձամբ մասնակցել է մարտին՝ կրակելիս է եղել հրանոթից: Փացաոփկ մեծ են եղել և

Գրիգոր Կախկոպոս Մանուչարյանի սխար-
գործությունները, որը կամավորական մի խո-
շոր ջոկատի գլուխ կանգնած, տասնյակ տա-
րիներ կոչել է Հայաստանը ավերող և հա-
րստանաբող պարսկական և քյուրական
տիրակալների դեմ: 1804, 1808, 1827
թվականների ռազմական գործողությունների
ժամանակ էջմիածինը բաց է արել իր շտե-
մարանները ռուսաց բանակի առջև և իր ու-
նեցած վերջին կտոր հացը բաժանել նրա
հետ:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին
այսօր նակատը բաց կարող է հայտարարել,
որ նա միշտ շիտակ է եղել իր Հայրենիքի,
իր ժողովրդի նկատմամբ: Արևելյան Հայաս-
տանի Ռուսաստանին միացման գործում Հայ
եկեղեցու ցուցաբերած վերաբերմունքը դրա
ցայտուն օրինակն է:

Սակայն չպետք է միջանել, որ անցյալում
ցարիզմը փորձել է ազգային անվտանգու-
թյուն, կրոնական անհանդուրժողություն
սերմանել ժողովուրդների միջև: «Ցարական
Ռուսաստանը, — գրում է Վեհափառը, — ռուս
ժողովրդի հոգեբանության հակառակ, «Ռա-
ժանեա՝ զի տիրեսցես» պառակտողական
սկզբունքով էր ղեկավարվում, որ միայն
նպաստում է ժողովուրդների պառակտման և
երկրի բուլացման: Սակայն ցարիզմին,
վերջին հաշվով, չհաջողվեց հասնել իր նպա-
տակին. ռուս ժողովրդի ազնիվ վերաբեր-
մունքը հայ ժողովրդի նկատմամբ մնաց
անխախտ:

Համաշխարհային առաջին պատերազմի
օրերին, մի անգամ ևս հայ ժողովրդի գլխին
կախվեց դամակյան սրի նման՝ ազգովին
բնաջնջման սարսափը: Գերման-բյուրական
դանիները այս անգամ օրակարգի էին դրել
հայ ժողովրդի փիզիկական իսպառ բնա-

ջնջումը— Հայաստան՝ առանց հայի: Այդ
դաժան փաղափանդությունը առաջ տա-
վեց արյունով ու կրակով: Հայաստանը եռ-
րից դարձավ սուգի, ողբի, արցունքի Հայ-
րենիք:

Մեր ժողովրդի համար ամենամոռալ այդ
ժամանակաշրջանում, հայ ժողովուրդը եռ-
րից մի անգամ ևս իր հայացքը սեռեց
ղեպի Ռուսաստան, ղեպի ռուս ժողովուրդը:
Նորից օգնության հասավ ռուս ժողովուրդն
իր հերոսական կարմիր Ռանակով և փրկեց
միանգամ ընդմիշտ կործանման անդունդի
կզմին հասած հայ ժողովրդին:

Հայաստանում սովետական կարգերի
հաստատումով, մի նոր ու փառավոր էջ
բացվեց հայ և ռուս ժողովուրդների բարեկա-
մության և սրտագին հառաբերությունների
համար:

Սովետական բազմազգ ընտանիքում, եղ-
բայրական միությունական ժողովուրդների և
առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի ամեն-
օրյա հոգատարության և պաշտպանության
շնորհիվ, հայ ժողովուրդը այսօր կերտում է
իր պատմության ամենապայծառ, ամենա-
փառավոր մեկ էջը: Նա հեփաթի փլուզվել
թոշունի նման հաբություն է առել և այսօր
հաստատական իր ժողովրդի ոսկեդարն է
կոտմ և կոփում: Հիմնվել ևն արդյունաբե-
րական հսկաներ, ծաղկել է հայ ժողովրդի
կուլտուրան, ստեղծվել է բարեկեցիկ կյանք,
ցրված հայությունը հավաքվում է Մայր
Հայրենիքում:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին
միացնելու 125-ամյակի առթիվ, երախտա-
յետ հայ ժողովուրդը շնորհակալական իր
սնկեղծ խոսքն է ուղղում իր ազատարարին՝
ռուս մեծ և ազնիվ ժողովրդին:

Թող անսասան մնա հայ ժողովրդի յավա-
զայն բարեկամը՝ ռուս ազնիվ ժողովուրդը:





ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՃԱԿԸ ՊԱՐՍԿԱ-ԹՅՈՒՐԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅՍՏԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

(1823 թվականի վավերագիր¹)

Ողորմած Տե՛ր,

Մի կողմ թողնելով [պարսից խաների կողմից] վանքի միաբանությունը և կաթողիկոսին պատճառած մշտական վիրավորանքներն ու կողոպուտները, անհրաժեշտ եմ գտնում հիշատակել այստեղ միայն մի քանի աչքի ընկնող փաստեր:

1811 թվականին արեղակնափայլ թագաժառանգ Աբրաս Միրզան... հարգելով կաթողիկոսի խնդիրը, իր բարձր հրամանով, վերադարձրեց էջմիածնի Մայր Աթոռին Աշտարակ գյուղը, որը գրավված է եղել Մուհամեդ խանի հոր՝ Հուսեին Ալի խանի կողմից: Սակայն Հուսեին Ղուլի սարդար խանը գյուղը հանձնելու համար պահանջեց 10.000 ռուբլի, բայց տրվհետև մենք չենք կարողանում վճարել նրան այդ գումարը, ուստի և նա չի հանձնում հնուց մեզ պատկանող գյուղը: Այժմ, 13 տարի է ինչ էջմիածնի Մայր Աթոռը իր ձեռքում ունի այդ շնորհագիրը, իսկ սարդարն է օգտվում այդ գյուղի եկամուտներից:

Նմանապես Նղվարդ վոչված գյուղի՝ վեցից չորս և կես մասը պատկանում է վանքին, իսկ մնացածը մասնավոր անձանց, բայց 1812 թվականից սկսած ամբողջապես օգտագործում է ինքը սարդարը, առանց վանքի մասնակցության: Նույն թվականին խանը,

ինչ որ պատրվակով կանչել տալով իր արքունիքը վանքի միաբաններից տիրացու Ահարոնին, հրամայում է բռնի թլփատել նրան:

1816 թվականին խանը վերացրեց թագաժառանգ Աբրաս Միրզայի շնորհած բոլոր արտոնությունները և վանքի գյուղացիների վրա դրեց 4.000 ռուբլու հարկ և 400 ռուբլի՝ տեղափոխության համար:

1817 թվականին երբ նրան բողոք ներկայացվեց վանքապատկան հողերի վրա զբաղեցրած մուղանցիների հարկը չվճարելու մասին, չբավարարեց մեր արդարացի պահանջը այնքան ժամանակ, մինչև շատացավ մեզանից 5.000 ռուբլի:

Սակայն, ամենից չարաքաստիվը այն է, որ 1819 թվականին վանք ուղարկելով սարդար Մուհամեդ խանին 12 հոգի սարվազներով, հրամայեց վեց անվանի արքեպիսկոպոսների և էջմիածնի ավանի աչքի ընկնող բնակիչներից մի քանիսին բանտարկել մի խուցում, քարով շարել դռները և այդպիսի դազանային ձևով զրկել նրանց կյանքից այն բանի համար, որ իբր թե նրանք չեն հնազանդվել կաթողիկոսին, Թեև կաթողիկոսը և նրա հետ ամբողջ հոգևորականությունը ամեն կերպ հավաստիացնում էին, որ նրանց կողմից այդպիսի մտադրություն անգամ չի եղել, բայց և այնպես հնարավոր չեղավ այդ դժբախտներին այլ կերպ ազատել, բայց միայն 10.000 ռուբլու պարտաժամով՝ վճարելու նրան մեկ ամսվա ընթացքում՝ իբրև վարձատրություն իր և իր սարվազների աշխատանքի:

Այնուհետև, նրանք կապկպեցին վանքի աչքի ընկնող մի քանի ծխականների ձեռքերն ու ոտքերը այն բանի համար, որ համարձակվել են իրենց արտադրած բամբակ-

1. Ներկա վավերագիրը, որ սևագրություն է, լույսի հեղինակի անունը, բայց տեղի վրա փաստերից կարելի է կռահել, որ այն գրել է Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին ոտնակամ բարձրաստիճան մի պաշտոնյային, հավանական է գեներալ Նրմուլովին: Վավերագրի սեղանոր ոտներին էլ մենք թարգմանել ենք հայերեն և տպիս ենք կրճատումներով:—ԽՄԲ.:

կեղծին կտորը վաճառելու, Մեծելով, նրանցից բռնազանձեցին 2.000 ռուբլի տուգանք, որից հետո միայն հազիվ հազ ազատվեցին տանջանքներից:

Բայց ամենից անտանելին այն է, որ 1821 թվականին, նավթուղի կամ նոր տարվա օրը կաթողիկոսը ներկայացավ սարդարին, ըստ պատշաճավորության զարդարված նորին Վեհափառության Ռուսաստանի կայսեր շնորհած շքանշաններով: Այս շքանշանների ստացման մասին սարդարը տեղեկացրել էր պարսից թագաժառանգին և վերջինս շնորհավորագիր էր ուղարկել թագավորի ողորմածության համար, որի մեջ Ռուսաստանի ամենաողորմած թագավորին անվանում էր հայր և թույլ էր տալիս կաթողիկոսին կրեչու այդ շքանշանները: Բայց սարդարը այդ հրամանից մի քանի տարի անցնելուց հետո սուրհանդակ է ուղարկում, ասելով, որ եթե կաթողիկոսը մյուս անգամ իրեն՝ սարդարին ներկայանա այդ շքանշաններով, ապա կաթողիկոսը այդ շքանշանների ժապավեններով կախաղան կրարձրացվի:

Այդպիսի վերաբերմունքից հետո, կաթողիկոսը հոգեպես խորը վիրավորված՝ կորցնելով իր բոլոր հույսերը՝ առաջիկայում Մայր Աթոռի և հոգևորականության քարվոք վիճակի մասին, թեև իր կյանքը կարող էր վտանգի տակ չգտնվել, այնուամենայնիվ նորին Վեհափառությունը նպատակահարմար է համարում անմիջապես հեռանալ ռուսություններից և վերադարձնել:

1822 թվականին, երբ արդի կաթողիկոսը գտնվում էր Շուշի քեդրում, որ Ղարաբաղում է, էլ միաժամանակ վախճանվեցին երկու անվանի եպիսկոպոսներ: Նրանց խուցերի դռները, թաղումից հետո, ըստ վանքում գոյություն ունեցող կարգի, կնքվեցին Մայր Աթոռի կառավարչի կողմից, որպեսզի նշանակված օրը, հավաքելով բոլոր միաբաններին, կազմեն եղած գույքի մանրամասն ցուցակը և այդ ժառանգությունը միացնեն վանքի դույքին:

Սարդարը տեղեկանալով արքեպիսկոպոսների մահվան և նրանց խցերի դռների կնքման մասին, անմիջապես ուղարկեց Ջաֆար խանին՝ իր վայրագությունների սովորական կատարողին, որը կնքելով խցերի դռներն իր կնիքով, առաջարկեց վանքի կառավարչին կամ վճարել 150.000 ռուբլի այդ գույքի դիմաց, և կամ՝ ձեռք չտալ հիշյալ խցերի դռներին: Ապա, մի քանի օրից հետո, Ջաֆար խանը նորից եկավ իր բաղժաթիվ ծառաներով և, բաց անելով խցերի երկու դռները, հավաքեց արծաթն ու ոսկին երկու փոքրիկ սնդուկների մեջ, իսկ թանկարժեք քարերը, ժամացույցներն և այլ լավագույն իրերը մի ուրիշ սնդուկի մեջ, մնա-

ցածից գաղտնի և քացահայտ ընտրելով լավագույնները, հրամայեց անարժեք իրերը համար կազմել պարսկերեն և հայերեն լեզուններով ցուցակ: Այնուհետև բաց թողնելով միաբաններին, ինքը նրեք լեցուն սնդուկներով դնաց իր քնավարանը, որը նախապես ինքը, ըստ իր ցանկության, ընտրել էր: Հետո, գիշերով, կանչեց եպիսկոպոսներին, որ իբր թե նրանց ներկայությամբ է այժմ բաց անում սնդուկները, հարկադրեց նրանց կազմել ցուցակ, որը և հետևյալ օրը հանձնեց կառավարչին: Այնուհետև կանչելով իր մոտ հանգուցյալների մերձավոր վարձպետներից մեկին՝ Ստեփան անտնով, անմարդկային շարժարաններով տանջեց նրան՝ թե ինչու խուցերի մեջ քիչ իրեր են հայտնաբերվել: Նման տանջանքներով Ջաֆար խանը ցանկանում էր, որ տանջվածը ասի, որ իբր թե վանքի կառավարիչը իրեն մեծ քանակությամբ իրեր է հանձնել: Այնուհետև կարգադրեց շփկացած երկաթով այրել նրա մարմինը և, ստանալով դժբախտից գաղտնի խոստում՝ վճարելու 1.000 ռուբլի, նոր միայն ազատեց նրան այդ տանջանքներից:

Այդպիսի անօրինակ բռնությունները, որը վանքի կառուցման օրից ոչ մի ժամանակ չի տեսել Մայր Աթոռը, կատարում են Հուսեյն խան սարդարը և նրան ամեն ինչում հույ հնազանդ Ջաֆար խանը, իհարկե, ոչ ոգուտ Աթոռի, ինչպես իրենց են ցանկանում պատկերացնել, այլ՝ հոգուտ իրենց: Եվ այս՝ երկու պատճառով: Նախ, որ հանգուցյալներից մեկը հայտնի է եղել իր մեծ հարստությամբ, ինչպես այդ վկայում են հանգուցյալի ձեռքով գրված գրությունները և այլ տեղեկագրեր, որոնց այժմ գտնվում են ինձ մոտ: Այս առթիվ կան և շատ ականատես վկայություններ և ապա, գլխավորը, որ տեղեկանալով եպիսկոպոսների հարստության մասին, կարողանան որոշել իրենց որդրամուկության չափը: Նրանց կեղծ, հնարովի հոգատարությունը վանքի բարօրության մասին, հայտնի է թեկուզ նրանից, որ նշված եպիսկոպոսների գույքի հինգերորդ մասն անգամ չհասավ վանքի կառավարչությանը, որը վանքի համար մեծ օգնություն էր նրա տնտեսական սուղ պայմաններում:

Անցյալ օգոստոս ամսվա սկզբում Միրզա Ջաֆար սարդարի ծառան, որ մի հատիկն է հոգևորականներին ճնշելու գործում, եկավ էլ միաժամանակ գտնելով այստեղ պատշաճ հույրասիրություն: Բավական կոնժելուց հետո, Միրզա խանը հրամայեց իր մարդկանց մերկացնել զենքերը և ձեռնի բուրդին: Ըստ որում, Միրզա Ջաֆարի ծառաները վիրավորեցին երկու եպիսկոպոսների, թրի հարվածով կտրեցին արեղաններից մեկի վեղարը, չարդեցին մյուսի թևը, երրորդին սկսեցին

ծեծել՝ հասցնելով կիսամեռ դրություն, իսկ երբ ցանկացան նրան մորթել, սարդարի ծառաներից մեկը ազատեց նրան: Այնուհետև սպանեցին վանքի դարբասի պահակներից մեկին:

Բոլոր ճնշումներն ու բռնությունները քոյր տեսակի միջոցներով լիակատար դարձնելու համար, Զաֆար խանը ավելացրեց և այն, որ էշմիածնի փոքր հյուրատան բակում գրտնըվող 13 խանութները ինքնիշխան կերպով ընդունեց իր սեփական գերատեսչության ներքո, և իր իշխանության տակ գտնվող գյուղացիներից հավաքելով ընդին զենով գինի, սկսեց վաճառել երկաթատիկ և եռապատիկ զնով, որի հետևանքով ժողովրդի և միաբանների մեծագույն հասնում է մինչև 15.000 ուտություն:

Նման անգութ և շարագործ կառավարման հետևանքով, էշմիածնի վանքը վերջին հինգ տարվա, առանձնապես վերջին երկու և կես տարվա ընթացքում, պարտքի տակ ընկավ 336.845 ուտի 90 կոպեկ գումար երեւանյան արծաթ դրամով: Այդ ժամկետի ընթացքում վանքի պարտատերերին վճարված գումարը կազմում է 350.363 ուտի 25 կոպեկ և այժմ դեռ մնում է 320.000 ուտություն ավելի պարտք: Իսկ սարդարը, պաշտպանելով պարտատերերին, որոնք ստանում են վաշխառուական և շտեմբակ լափի տոկոսներ, դեռ հանցավոր է համարում միաբաններին: Բայց պարսից թագաժառանգ՝ Նորին Մեծություն Արթուր Միրզան, որի բարեհաճությունն ու ողորմածությունը ինչպես դեպի Եփրատ կաթողիկոսը, այնպես և ողջ հոգևորականությունը գերազանցում է նրա նախորդների ողորմածություններից, մինչև օրս էլ չգիտի վանքի կրած ճնշումների և կաթողիկոսին ու հոգևորականությանը պատճառած անտանելի վիրավորանքների մասին:

Բացի այդ, Զաֆար անունով մի վարդապետ անցյալ տարի գտնվելով Թեհրանում և արժանանալով Նորին Մեծության Զաֆարի


Շահի տեսակցությունը, հայտնել է միայն վանքի տների մասին, ոչ մի խոսք չասելով մյուս վիրավորանքների և կոդապուտների մասին: Այս առթիվ պարսից թագավորը, ի նշան իր բարեհաճության Արարատյան Աթոռի նկատմամբ, իր որդուն՝ թագաժառանգին հրովարտակ է ուղարկել և առաջարկել միջոցներ ձեռք առնել՝ թույլ չտալ վանքը քայքայելու: Կաթողիկոսը Շուշի գտնվելու հետևանքով, Զաֆարի շահը ուղարկել է այդ գրությունը կաթողիկոսին, որին Նորին Վահապառությունը մինչև օրերս չի պատասխանել:

Կաթողիկոսական Աթոռի, իրեն՝ կաթողիկոսի, իմ քաղաքիվ հոգևոր միաբանակից եղբայրների և ամբողջ հայրենի ժողովրդի այդպիսի ծանր դրությունը, ավելացնելով դրան նաև իմ քաղաքացիական պարտքը, իմ վրա սուրբ պարտականություն են դրել, գիմել որոշ միջոցների՝ թեթևացնելու Արարատյան Մայր Աթոռի վիճակը, երևանի ներկա դեկավարների՝ անսահման քրոնությունների, մեծ մասամբ կոդապուտի միջոցով առաջացած պարտքերից, ինչպես և զանազան խաբեության միջոցով կատարվող ապօրինի պարտքերից, որոնք ավելանում են մուրհակների վերադիր տոկոսների անընդհատ աճով և այն պարտամուրհակներով, որոնք ուժով գտնվում են խնձ մոտ...:

Այս անսպասելի դեպքի կապակցությամբ, ես գիմում եմ երկրային կիսազնդի բարձր և զորեղ պաշտպանի՝ համայն Ռուսաստանի ինքնակալի՝ ամենահռչակալի և աստվածանման հովանավորությանը և հայտարարում եմ Ձեր գերազանցությանը Կաթողիկոսական Աթոռի երկարատև և ժայռահեղ քայման, կաթողիկոսին և հոգևորականությանը հասած զժառանգությունների մասին, որը և վերաբերում է ամբողջ ժողովրդին...:

Սեպտեմբեր, 1823 թ.

(Հայկական ՍՍՀ Պետական մատենադարան.
Արխիվային քամի, Կաթողիկոսական գիմում.
քաղաքական № 46, վավերագիր № 223)





ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԿՈՆԴԱԿՐ ԱՐԵՎԵԼԵՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ԱՄԵՆԱԲԱՐԵՊԱՇՏ ՊԱՏՈՒԵԼԻ ԵՐԱՄՈՅ ՍՐՐՈՅ ԼՈՒՍԱՌՈՐԶԻՆ ՀԱՅՈՑ ՀՈ-
ԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ԵՒ ՄԱՐՄԵԱՌՐԱԿԱՆԱՅ ԲՆԱԿԵՑԵԼՈՅ (տեղաբնակ բաց է
թողեված), ՍՐԲԱԴՈՐԾ ՔԱՀԱՆԱՅԻՑ՝ ԱՌԱԳԱՅ ԵՒ ԵՂԵԼՈՅ ՅԻՐԱՔԱՆՁԻՐ
ԿԱՐԳԻ, ԵՒ ԳԵՐԱՊԱՏԻՈՒ ԱԶԳԱՍԷՐ ԻՇԽԱՆԱՅ՝ ՀՈԳՍԲԱՐՁՈՒԱՅ ՀԱՍԱՐԱ-
ԿՈՒԹԵԱՆ, ԵՒ ՎԵՐԱՏԵՍՁԱՅ ՍՐՐՈՅ ԵԿԵՂԵՑԵԱՅ, ԵՐԵՅՓՈՒԵԱՆԱՅ ԵՒ ԳԱՆ-
ՁԱՊԵՏԱՅ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԱՄԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՅ, ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆԱՆՅ,
ՄԵՍԱՅ ԵՒ ՓՈՔՈՒՆՅ, ՈՂՋՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՆՈՒԻՐԵՄ ԲԱԶՄԱՊԱՏԻՎ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

Օրհնեալ Տէր Աստած Իսրայէլի, որ յայց ել մեզ և արար գիրկովորէն ժո-
ղովորեալն իւրոյ՝ երգեաց ի ծննդեանն Սրբոյն Յովհաննու քահանայն Զա-
քարիաւ: Զնոյն այժմ երդակցեալ նմին, աւետարանեմ ձեզ՝ զմեծամեծացն
Աստուծոյ ի հասեալ ժամանակի յայսմիկ վասն անձառ մարդասիրութեամբ
իրկութեանցն նորա Հայրենեաց Հայաստանի Արարատեան աշխարհի և բազ-
մութեան Հայկազանց՝ տառապելոց ընդ ամենայն սահմանա Ատրպատակա-
նի՝ հզօր զօրութեամբ և բարձր բազկաւ Օծելոյն իւրոյ Ինքնակալի Ամենայն
Թոսաց և Մեծ Տիեզերակալի Թաղաւոր Կայսր Նիկիոյայի Առաջնոյ:

Հուեալ իցէք թերեւ կանխաւ յառաջ, զի յամի 1826, յամենան յուլիսի,
յանկարծակի անկեալ զօրաց պարսից ի վերայ ընակչաց մերձակայ սահմա-
նաց ոռուաց ի գաւառն Շիրակայ, յԱրցախայ, որ է Ղարապաղայ, Շաղուայ և
Շամախոյ, կոտորեցին, գերեցին ուր և կարացին զբազումս ի Հայոց և յա-
ւետարանական ժողովրդոց, այն է նեմէցաց՝ ամօք յառաջ վերաբնակելոց յԵ-
րուսիդ: ի սահմանաց Վէրտէմբուրիայ՝ ի սահմանս Վրաստանու տեղակայե-
լոց ի մասին Հայաստանի Սոմխեթիա կոչեցելոյ:

Արշաւանք յիրաւի զարհուրագին յոյժ ո՛չ յազազս ահեղ զինուորութեանց
նոցին, այլ յազազս բազմաթիւ յարձակմանց նոցին ի ժամու բարեկամութեան և
ի ժամանակի անպատրաստութեան քաջազէն զինուորութեան ոռուաց և ամե-
նայն հասարակութեան հաւատարիմ հպառակաց քրիստոնէից Հայոց և Վրաց,
յորժամ իսկոյն միարանեցան ընդ նոսա և ամենայն հասարակութիւնք, հպո-
ւտեցեալք մահմէտականաց ընակչաց՝ ի սահմանս ամենայն նշանակեալ գա-
ւառաց:

Վասն հետեւեալ Խաչարախութեան իրեանց յապալս: զառաջինն, յայնժամ
բարեբախտ եղևն պարսիկ, տառնց դիմակալութեան հակառակորդաց ուրեք,
տիրել իսկայայէս իմն ամենայն նախադրեալ տեղեացն, և տանջել, կեղեքել,
մանաւանդ ի նոխի զբազումս ի Հայոց, յորժամ նոցին դիմագրաւ մնաց
միայն ի Ղարապաղ յամրոցն նորին ի զլուխս լերին Շուշի անուանեալ քաղաք,

յորում էին բազմութիւնը Հայոց և գունդ փոքրիկ սահմանեալ զօրաց ուսաց, իսկ բնակիչը ի մահմէտականաց՝ թէպէտ և իշխանաւորք և կարողագոյնք, այլ ո՛չ այնքան բազմաւորք: Յոյր սակս մեծ բանակն պարսից, ընդ կառավարութեամբ ժառանգի տէրութեանն պարսից, զաւուրս քառասուն և ինն զրադեալ ի պաշարման նորին: Մարթ է ասել, թէ ա՛յն եղև յայնմ ժամանակի աւագակաբար ասպատակութեան նոցին առիթ ազատութեան ապրեցելոցն յամենայն սահմանս Վրաստանու ի վերահասեալ վտանգէ նոցին, յորժամ կարողացեալ զօրաց ուսաց եղելոց ի տարակացութեան ի զանազան տեղիս իւրեանց հաւաքել ի մի, և հանդիսանալ ախոյեան հօր յանդիման թշնամեաց ի սահմանս Ելիսավետօպօլոյ, այն է՝ Գանձակայ՝ ի Շամքո առուսեանալ նահանգի, ընդ զօրապետութեամբ դեներալ մայեօր Հայկազն քնեալ Մատթովի, ուր և յաշտութեամբ Աստուծոյ պարտեալ սակաւաւորօք զմեծ բազմութիւնն պարսից, կոտորեցին զբաղումս, գերեցին զհարիւրաւորս, սպանին և դմեծ զօրագլուխն նոցա զքեռի յիշեալ շահադային՝ զԱմիրխան սարտար, և ի նմին իսկ ասուր տիրեալ Ելիսավետօպօլ քաղաքին և ամենայն սահմանաց նորա: Յետ ոչ բազում ատուրց, հասեալ անդ առ նոցա և զենեալ լեյտենանտ Իւան Ֆէդդիչ Պասկելիչ միւս ոռա փոքրիկ գնդաւ զօրաց՝ այն ինչ մտադիր լինէր նա դիմել ի վերայ մեծ քանակի արքայորդոյն պարսից, որ պաշարեալ ունէր զամրոցն Շուշի: Ահա ինքն արքայորդին ի բաց լքեալ զպաշարումն, դիմէ անհնարին ցասմամբ ի վերայ բանակին ոռաց՝ որ լնիզավետօպօլ, առնուլ զվրէժ հարուածոցն նոցա իւրոցն, այլ դի Տէր է որ յաշողէ զամենայն յամենայնի, անդ ևս հօրացեալ արիւնքէս բարեբախտ զօրապետ դեներալ լեյտենանտ դեներալ ատիւտանդ Պասկելիչն օգնականութեամբ երկնից՝ զդիմի հարեալ բազմութեանն թշնամեաց իւրովքն սակաւաւորօք ցրուեալ հալածեաց զրոն բանակն պարսից, գերեալ զհազարաւորս ի հետեակաց նոցին, և սատակեալ զբաղումս ի հետեակաց և ի հեծելոց, յորժամ ինքն արքայորդին սրավար արշաւանօք նժույզ երիվարաց հազիւ ուրեմն փախստական անցեալ ընդ Երասխ ի սահման իւրեանց մազապուրծ զանձն ապրեցուցանէ յահեղասաստ հրոյ և սրոյ յաղթողաց: Եւ եթէ զոյր պաշար բաւական, յայնժամ իսկ զհետ ընթացեալ նորա, զօրէր մտանել ի Դաւթէ ի նոյն իսկ ամսեանն սեպտեմբերի բանակն ոռաց, այլ դի նորոգ կարօտէր ամենայն պատրաստութեանց պատերազմականաց վասն անակնկալ պատահմանցն այնպիսի պատերազմութեանց, որպէս առհաւատչեալ իմն յահագնութիւն թշնամեաց միայն անցեալ ընդ Երասխ, և անտի ևս փախստական արարեալ արքայորդին պարսից, և տիրեալ նահանգաց այնոցիկ՝ վերադարձաւ անդրէն վասն վերաժառանելոյ ձմեռան:

Տէրութիւն ոռաց կարգաւորեալ զամենայն լընթացս ժամանակաց սաստկութեանս ձմեռայնոյ, իսկ և իսկ ընդ քանիլ գարնան, յառաջ խաղացուցեալ զզօրսն իւր ի 6 ապրիլի, հասին նախընթաց զօրք նորին յԱթոռ Սուրբ Էջմիածնի ի 13 ապրիլի 1827 ամի, ընդ տրա և մեք, թէպէտ ոչ զինակիր, ալ որպէս զինուորակից փրկական խմբի նոցին, ազօթիւք և հարազատութեամբ հոգւոյ: Յետ 15 ամաց պանդխտութեան մերոյ վիճակաւոր արքայիսկոպոսութեամբ ի սահմանս Վրաստանու, արժանի եղաք ո՛չ ընդ մերոց յարձանաւորութեանց, այլ ըստ առատ խաղասիրութեանց Աստուծոյ, համբուրել զփափաքելին հոգւոյ մերոյ, և լինել ականատեսս սքանչելի ներգործութեանց այցելութեանց երկնից ի փրկութիւն մերոց Հայրենեաց և ամենասիրելի համազգեաց, որով և գտանի, բարեբախտ, լինիլ աւետաւոր առ ձեզ և առ ամենայն ազգս Հայոց. ռմեծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք բերկրեալքս:

Քանզի ո՛վ ամենաբարեպաշտ արգոյք, որդիք Հայրենեաց Հայաստանի, անշոշափելի էր այս ամենայն նախատեսութեանց մարդկային մտաց, զի յետ տարտամ ընթացից պատերազմական գործոց ամսօրեայ ժամանակօք, այն իսկ արքայորդին պարսից Ապպաս Միրզայ, թողնալ զմեծ բանակն ռուսաց ի նախիջևան գաւառի, ոչ անգոսնելի խոհական ընտրութեամբ, ստուար բանակաւ, եկեալ, գտնելի կալեալ մերձ ի Սուրբ Կաթողիկէ Էջմիածնի ի տեղի սուգահով ըստ ամենայն ամրակուտ դրութեանց, ի դաշտին Օշափան գեղջ, և առաքեալ զգունդս հետեակ զօրաց հանդերձ թնդանօթիւք ի 12 օգոստոսի, յաւուր տօնի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, սէկզբն արարին հարկանել թնդանօթիւք տ՛լ զկալուղիկէ եկեղեցւոյն, ալ զպարիսպն ամրոցի նորին զատուս և Մինչ՛ ի հինգերորդօրսն, որ օր տուան և երրորդ էր ամսոյն, փութացեալ յօգնութիւն բազում զօլութեանց արժանաւոր քաջ զինեալ լեյտենանտ Աֆանասի Իւանիչ Կոասովսկի 2.500 հետեակօք և 500 ձիաւորօք, երկոտան թնդանօթիւք ի բանակէն՝ որ յԱպարան, առ ստորոտով լերինն Արալի Չոթմէ յուր առեալ թշնամեաց, ի մէջ գիշերի, թողեալ զպաշարումն, զանխով ընթանան միանան ընդ զօրս մեծ բանակի իւրեանց։ Եւ ընդ լուսածագն առաւօտուն զգացեալ մեր վասն զալստեան օգնական զօրաց և գոլով ծանօթ մեծութեան բանակի թըշնամեաց և ամրութեանց տեղւոյն և անձկութեանց քարակարկառ ճանապարհացն ընդ որ անցանելոց էին զօրքն քրիստոսազօրք և ամենայն հնարադրութեամբ նախապատրաստ որոգայթիցն լարելոց շուրջ զճանապարհան, յուսացեալ յօգնականութիւն Տեառն Աստուծոյ, միարան առ հասարակ, փութացաք ի սուրբ յեկեղեցին և մատուցեալ զչերմեռանդական ազօթս բազում արտասուօք, խնդրեցաք զօգնականութիւն յերկնից։ Եւ յետ կատարման պաշտամանցն, ելեալ ի բարձունս տաճեաց Սրբոյ Կաթողիկէին կայաք ի զնին։ Եւ ահա ի գալ ժամանել բարձր փառաւորագոյն զօրաց ռուսաց ի տեղին, ուր յառաջ քան զ477 ամ, այն է յամի Տեառն 1351, Վահան Ամատունի հզօրացեալ Աստուծով, նիզակահար յերկիր կործանեալ զզօրադուխն հիսսականաց կապաւսականաց, վանեաց զգորովիւն նորին, անդէն, ի նմին տեղադր, երկրորդ անգամ այժմ արքայորդին պարսից զպատերազմն իւր սաստկացուցեալ յիններորդ ժամու, յառաջ քան զկէս օրն, ի լրման ութն ժամուց, ահեղ պատերազմութեամբ ընդարձակեալ զճանապարհ իւրեանց զերթէ խորտակմամբ ամենայն զօրութեանց թշնամեաց հսկայօրէն յո՛յժ յո՛յժ, անցեալ ընդ ամենայն դժուարութիւնս քարակիրճ ճանապարհացն, եկին ժամանեցին ի Սուրբ Կաթողիկէն Էջմիածնի աստուածազօր փունդքն հզօրաց երկուտուան թնդանօթիւք իւրեանց։

Այս քաջութիւն նոցա սասանեցուցիչ էր թշնամեաց, այլ ոչնու ամենայնիւ առ դիպեցաւ և մեզ տրտմութիւն մեծ, այն, զի հետեալօրք ռուսաց ժամ 12 ճանապարհորդեայք ընդ անշուր անապատ և յանդիման արեգակնակէզ օդոց վճարեալ զպատերազմն ութն ժամուց, ընդ ժամանելն ի ջուր այգեստանեայց Կաթողիկէ Էջմիածնի, գունդն առաջին անցեալ յապահովի գայր ժամանէր յԱթոն, և զունդն վերջին ընդ նորին գերազանցութեան քաջամարտ զինեալ Աֆանասի Իւանիչ Կոասովսկոյ կալեալ զառաջս թշնամեացն, դայր պատերազմաւ գունդն, որ ի միջի որպէս ի տեղի ապահովի քաջակայ յառաջնոցն և ի վերջնոցն անկանի ի վերայ ջրոցն, զոլով յազթահարեալ յուճկութեանց ծարաւոյ, ուր ի վերայ հասեալ հեծելազօրաց թշնամեաց դարանակալաց մերձ առ նոսա, սրահար, նիզակահար սպանանեն զանկեալսն ի վերայ ջրոց զհարիւրաւորս քանիս, գերեմարեն և աւելի քան զերկերիւս, մինչև ցժամանել առ յոսա վերջին բանակին, որ հալածեալ զթշնամին, զպարեցուցեալսն ի սրոյ և

ի գերութեանց նոցին էած ընդ իւր ի Սուրբ Էջմիածին: Ուրախութիւն լինէր թշնամեաց, արդարեւ, տրտմութիւն մեր այս, եթէ հարուածք իւրոցն և դիակունք անկելոցն չլինէր հնգապատիկ առաւել: Զարհուրեալ արքայորդւոյն փորձառութեամբ սակաւատրաց զինուորութեանց ռուսաց: Այն ինչ զենեկաւ Կոստովսկի պատրաստէր զիւրսն ընդարձակ ճանապարհաւ անկանելի ի վերայ բանակի նոցին կոշելով յիւր յագնութիւն փոքրիկ գունդ ալ ի բանակէն: Այլ որ առեալ ունէր զչափ այսոցիկ պատերազմութեանց, ոչ ևս կարողացեալ ապաւինել յամրութիւն տեղւոյ իւրումն բանակի, և ոչ ի զօրութիւն զինուց իւրոցն թաղմատրաց: Յերրորդում աւուր խոյս տուեալ անտի ի յՈշականայ և անցեալ ընդ Հրազդան գետ, եմուտ ի խորաձորս Մաղկունեաց նահանգի: Ուր զկնի աւուրց, առեալ զյուր վերադարձի գլխաւոր կառավարչի ամենայն զօրաց, նորին բարձր գերագնացութեան զենեկաւ լէյտենանտ զենեկաւ ատիստանդ Պասկելի՝ ի խնդիր իւրումն բանակի: Յառաջ քան զմերձեցեալ նորին առ ինքն, երազեալ փախստական և անցեալ ընդ Սրասխ, առ ստորոտով լերինն Արարատայ, ընդ դժուարընթաց ճանապարհս՝ շուեաց ի խոյ քաղաք: Եւ գոգցես թէ ելիք մինչ ի սպառ զյոյս իւր ի վերայ իւրոցն ամենայն զօրութեանց, զի յետ այնորիկ ոչ ևս միւսանգամ կարողացաւ ընդառաջ ելանել սակաւուց կամ թաղմութեանց զինուորութեանց ռուսաց:

Ղենեկաւ ատիստանդ Պասկելի ի 4 ամսեանն սեպտեմբերի ժամանեալ, զրանակ հարեալ յանդիման թերդին Սրեմնայ: Յաւուրն երկրորդի, խաղացոյց զրանակն ի Սուրբ Կաթողիկէ Էջմիածին, և ի 11 նորին ամսոյ, օգտակարագոյն խորհրդածութեամբ, յառաջացեալ դէպ յարեմուտս Էջմիածնի, ի գաւառն Արշարունեաց, և բանակեալ մերձ Սրասխ գետ, ուր էր ի կողմանէ հիւսիսոյ նորակառոյց ամրոցն անուանեալ Սարտարապատ և յարեմտից կողմանէ՝ երեւելի գիւղն Հայոց յայն կոյս Սրասխայ, անուանեալ Կողք, յորում, իբրեւ յամրոցի իրիք, ժողովեալ պահէր Հիւսէյնի զուլի խան սարտարն Սրեանու զբնակիլա Աշտարակ, Օշական և Բարաքար անուանեալ գիւղօրէից Հայոց, և զշտեմարանս բաւական ցորենոյ և դարւոյ: Ազդեցութեամբ իւր, թերեւ նախախնամութեանց երկնից, զմտաւ ածեալ մեր, անդէն ի բանակին, և առաքեալ անդր զոմանս ի մերայնոց, հրաւիրեցաք զերեւելիսն ի Հայոց փութալ երազել առ մեզ ի բանակ անդր հեռաւոր յինքեանց իբրեւ շորից ժամուց ճանապարհաւ, որք և ըստ ազգական ամենաշերմեռանդ սիրոյ և հարազատութեան իւրեանց ժամանեալ առ մեզ իսկոյն ի շորրորդ պահու գիշերոյն, ընդարձակեցին մեզ ամենայն անձկութիւնն ցայն վայր, քանզի որ անձանթ էր մեզ յառաջագոյն, նոքա յայտնեցին մեզ վասն շտեմարանացն ցորենոյ և դարւոյ, որոց առաւել էր կարօտութիւն ահաւոր զօրաց յայնոսիկ աւուրս, յետորոյ գտեալ զայն պաշար բաւական, հաստատեաց զմիտս իւր պաշարել նախ զայն ամրոց Շտրակերտ, աւր վայր Հասան խան եղբայր սարտարին քանի հարաւորօք բերդապահ զօրաց: Եւ յաւուր իննետասներորդի ընդ երեկս, որ լուանալ ունէր օրն երեքշաբթի ի 20 սեպտեմբերի, զարհուրեալք ի կործանմանէ հարաւային պարսպաց ամրոցին ի հարուածոց մեծամեծ ուրաց՝ ասատնի անուանեալ պաշարող թնդանթից, յուսացեալ ի պաշտպանութիւն զիշերային խաւարի, բացեալ զգուռն արեւելեան, աճապարեաց ի փախուստ ամենայն զօրօք իւրովք՝ սկզբնապատճառ կարծեցեալ այսոցիկ ուխտադրով պատերազմութեանց Հասան խան: Որում զհետ ընթացեալ հեծելագորաց, զհարիւրաւորս քանիս կոտորեցին, ուր և զտին, և այնպէս բանակ զօրաց ռուսաց մտեալ յամրոցն տիրեաց խաղաղութեամբ՝ գտեալ ի նմին զլիութիւն առատութեանց ցորենոյ, դարւոյ և զանազան հանգամանաց պատերազմականաց:

Յերրորդումն աուր թողեալ անդէն զբերդապահս, երագեաց զխաւոր կառավարին զօրաց մեծ բանական յժրեան քաղաք, և պաշտեալ զանմատ- չելի կարծեցեալ մոլորեցուցիչն յուսոյ ամենայն աղիականաց զաջրոցն նորին յարեւիյց հարաւոյ, կործանեաց նովին թնդանօթիւք և զպարտապա նորին զար- տաքինն և զնեքթինն ի միջոցի 6 աւուրց, Յորժամ ևս այն իսկ զարծեալ խո- ճապէր ի փախուտ, փախուցեալն ի Սարտարապատաւ հախաւորք, սնուեաց հոշակեալն, ի զօրապետութեան իւրում՝ անարին ձասան էան, յայնմ ևս վրիպ- եալ ի յուսոյ իւրմէ ապստամբութեամբ ամենայն զօրաց և բնակչաց իւրոցն, հնազանդութեանց զարհուրելոց ի վերահասեալ համայնակորոտս վտանգէ ինո կործանմանցն պարսպաց, բացաւ ընդդէմ կամաց նորին դուռն ամրոցին:

Յետ որոյ, յուսացեալ նա ի հովանաւորութիւն նորակերտ աղօթարանի կառուցելոյ յեղբօրէ իւրմէ, անդէն, ի սենեկի միում նորին, պարտաւորեցաւ կալանաւորի ի սասանեցուցչէ ամենայն պարսկական զինուորութեանց ի զե- ներալ Կոստովսկոյ ի 1 հոկտեմբերի, ուր ևս կարգաւորեալ զհարկաւորսն իւրոց կառավարութեանց, մեծ զօրապետն Պասկեիչ կացուցեալ անդէն ի վա- ռավարութեան զօրաց զզենեակալ Կոստովսկի: Եւ ի կառավարութեան քաղաքա- կան գործոց զնա, և զմեզ, և զկամեհնդատն բերդապահ պօլկովնիկ, դիմեաց ինքն ազատաքալլ այնուհետեւ անցանել ընդ Երասխ, գնալ ի Դաւթ, ուր յա- ուջ քան զժամանել նորա վաղագոյն ևս հասեալ յառաջընթաց զօրաց անար- դել առանց իրիք հակառակութեանց թշնամեաց մահալ ի քաղաքն, աիրեցին ամենայն խաղաղութեամբ: Յետ որոյ ի լաց եղեալ ժառանգն պարսից Տէրու- թեան Ապպաս Միրզոյ զամենայն զոյս զինուց իւրոց և այլոց հնարից, ար- յեալ զէնքն ի վրիկս գթութեանց և ներդոյնեանց ամենաողորմած Խնքնակայի կայսեր ամենայն ուսաց, դիմեաց իւրովի առ բարեբախտ կուտակալն նորին զենեակալ օտ ինֆանտերի զենեակալ ատիւդանա զանազան նշանակիւր Իւան Նէտրիչ Պասկեիչն, և գանալ ընդ հաճոյս նորին զհնար պահպանութեանց աթոռոյ Գօր իւրոյ, մատոյց նմա զվճար ծախուցն պատերազմականաց տասն քրօ ոսկւոյ և արծաթոյ, որ կացուցանէ թուղթն դրամ ուսաց ութսուն միլիոն ուրբի: Այլ որպէս ինձ թո՛ւի, առաւել քան զայն կտանի նմա զգալի այս բա- ռեբախտութիւն Հայկազանց, զոր համաձայն մերոց խնդրանաց, ի գործ ար- կեալ յիշեալ մեծ զօրապետն բազում բարեբարութեամբ աղքատաց հասարա- կութեան Հայոց եղելոց ընդ իշխանութեամբ նոցին ըստ կարգի այլոցն հար- կաւորաց դաշնակցութեան, պարտաւորեաց դաշնակցիլ և առ այն, զի Հայք կամ այլ քրիստոնեայք եղեալք ընդ իշխանութեամբ իւրեանց ևս և մահմէտա- կանք զտանիցիւն աղաւթք ըստ իւրեանց կամաց մնալ ի տեղի իւրեանց ի ներ- քոյ պարսկական իշխանութեանց կամ չուել ամենայն կահիւք և կարասեօք իւրեանց ի սահման ուսաց:

Մեք առ սոյն ի մեր դիմաց առաքեալ քարոզ և հրաւիրակ ամենայն ժո- ղովորեան մերազանց զՍոսեփանոս եպիսկոպոս Ենօքեան տփիսիսեցի և զնի- կողայոս վարդապետ զարաբաղցի, անդէն և ինքն մեր զօրապետն օն անդր խնամակալութեամբ կարգեալ ի դիմաց Տէրութեան հրաւիրակ և օժանդակ իւրոցն համազգեաց զյիշատակն օրհնութեանց հայրենասիրացն ջուղայեցւոց զկրասեր որդի վեհազն աղալ Յովակիմայ Եղիազարեան զբարձր բարեձնունդ պօլկովնիկ ի գնդին գուարոթի վեհազնեալ աղալ Եղիազար Յովակիմեան Եղիա- ղարեանց, յանձնեալ նմա գործակիցս եղբօր Յովսէփ կաթողիկոս կոչեցելոյ զմայիօր կնեազ Մովսէս Զաքարեան Արդութեանց, զմայիօր կնեազ Իւան Երզնկեան Մելիքեանց, զկօլլեժսկի ասսէսօր, այն է՝ քաղաքական աստի- ճանի մայիօր Իսահակ Տէր Առաքելեան Զամազեանց, զԴաւիթ և զԱղեքսանդր

Ստեփաննան Դորդանեանց զինուորական աստիճանատրք, և զայլս ոմանս յաստիճանատրքաց Հայոց: Տուեալ նմա և ի պէտս հարկատրութեան աղքատաց ի դանձարանէ Տէրութեան թղթադրամ ասիղմացի անուանեալ հարկը հազար ոտլի դրամ, որ է 25 հազար մանէթ արծաթի, իս ահա գոհանամ զԱստուծոյ, զի ընդոստուցեալ յամենայն թմրութեանց մտաց ամենասիրելի ազգն մեր Հայոց, զան ժողովին օր ըստ օրէ ի կողմանց կողմանց Ատրպատականի, ի սահման Երևանայ, Նախիջևանայ և Ղարաբաղու, յորոց ալժմ ի սոյն կէտ զրութեանց ներկայ էին աստ առ մեզ անձինք առաջատրք հասարակութեանց վերաքնակեցելոց ի Դաւրիժոյ և ի Մարաղայէ, ևս և ի խոյոյ աւելի քան 1.500 տանց և որպէս ընթեռնումք զգրութիւնս եպիսկոպոսաց, վարդապետաց և աստիճանատրացն նշանակեցելոց մինչև ցելն մայիսի կամ յառաջադոյն ևս ամենայն բնակիչք Որմուշ, Սալմասայ և խոյոյ սահմանաց, որպէս աղկն ունիմք աւելի քան 10.000 տունք ի մեր ազանց, որդիք հարազատք Սուրբ Լուսաւորչին, որք վերանորոգեսցեն զաւերական Հայրենեաց իւրեանց, և զԱթոռ մեծ Քահանայապետութեան Ամենայն Հայոց և զբազմութիւն երևելի երևելի վանորէից, հիմնեցելոց ի Սրբոյ Լուսաւորչէն և յայլոց երախտաւորաց ազգի Հայոց շնորհօք և մարդասիրութեամբ փրկողին զհինքեանս Աստուծոյ և աստուածազօր Կայսեր ամենայն ոռոսաց:

Գոյ յոյս, և արդէն իսկ երեին նշմարանք կերպարանելոյն այնպիսի յուսոյ, թէ զօրութիւն երկնից որ օգնեաց քրիստոնէից ստորանկելոց բռնակալութեան պարսից, օգնեսցէ և քրիստոնէից ստորանկելոց բռնակալութեան օսմանցւոց, եթէ ոչ տէրութիւն օսմանեանց մեղմեալ զբռնակալութիւն զհետ լինիցի յայսմհետէ իրաւանց և արդարութեանց թագաւորավայելուլ զթութեամբ և ողորմութեամբ:

Սրբազնագոյն կաթողիկոսն կայր տաւելին յեպիսկոպոսարանի մերում, ի Տփլիս քաղաքի, և կամիմ փութալ անձամբ հրաւիրել զնա յԱթոռ Սրբութեան իւրոյ գէթ մինչև ց20 յունիսի:

Բազմութիւնք հոգեւորականաց, եպիսկոպոսաց և վարդապետաց և ամենայն դասուց կղերիկոսաց արժանի գտեալ ցանկացեալ խաղաղութեանց, տրքնին ի ջանս և ի վաստակս վերանորոգութեանց Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի Մայր Եկեղեցւոյ ամենայն Հայոց:

Լիապէս ևս պատմեսցէ վասն ամենայն ախորժականացն ձեզ հարազատ որդի Սուրբ Լուսաւորչին ի ձէնջ բարերարեալ սիրելին իմ աղայ Մովսէս տըփլիսեցի, որում յանձնեցաք և զոմանս ծանօթութիւնս տպեալս ի տպարանի ուսումնարանի Հայոց ի Տփլիս, համարելով զայնս հաշտականս ձերումդ ամենաբարեպաշտ հոգւոյ թարգմանեցեալս ի ոռոսաց լեզուէ ի հայ բարբառ: Եւ աղաչեմ զԱստուած, զի առաւել ևս յայսմհետէ արժանի արասցէ զմեզ գրել ձեզ հետ զհետէ զուրախականս և զսիրելիս ձեր զաւտարանութիւնս ազգական բարութեանց և յառաջագիտութեանց և ես կամ և մնամ միշտ իսկական վերապատուութեամբ և կատարելագոյն ջերմեռանդութեամբ հոգւոյ իմոյ յաւերժ բարեացապարտ ձեզ և ի սրտէ բարեացակամ:


ԶԵՐՈՒՄ ԱՄԵՆԱԲԱՐԵՊԱՇՏ ԱՐԺԱՆԱՆՁՆՈՒԹԵԱՆՑ ԽՈՆԱՐՉ ԵԱՌԱՅ՝

ՆԵՐՍԷՍ

ի 1898 ապրիլի 28.


ի Սուրբ Կաթողիկէն Էջմիածին

(Հայկական ՍՍԻ Պետական մատենադարան, Ափսիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 58, վավերագիր № 139):



ՊՐՈՖ. ԴՈՎՏ. Ա. ԱՅՐԱՀԱՅԱՆ

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ 17-րդ ԴԱՐԻ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ



այ-ռուսական հարաբերությունների մասին մեզ հասած հնագույն տեղեկությունները, հիմնականում, պահվել են միջնադարյան հայ պատմիչների և ժամանակակիցների աշխատություններում, կազմակերպված արխիվների րացակայության հետևանքով, չի մնացել հայ-ռուսական հարաբերությունների մասին 17-րդ դարից առաջ գրված գրքերն ո՛չ մի վավերագիր: Հայ իրականության մեջ արխիվի ստեղծման և պահպանման մասին, փաստորեն, առաջին լուրջ ուշադրություն դարձնողը և կանոնավորողը եղել է Սիմեոն Նրևանեցի կաթողիկոսը (1763—1780 թ. թ.), և նրանից հետո է միայն, որ մեզ մոտ սկսվում է կազմակերպված արխիվի գոյությունը: Դրանից առաջ մեզ հասած վավերագրերը պատահական են և անսխտեմ:

Հայ-ռուսական հարաբերությունների մասին, անհամեմատ, ավելի հարուստ են Մոսկվայի արխիվները, առանձնապես Հին վավերագրերի պետական կենտրոնական արխիվը (Центральный госуд. архив древних актов), նշված արխիվում հայ-ռուսական հարաբերությունների մասին գոյություն ունի հայկական հատուկ ֆոնդ՝ «Сношения России с Армянскими» անունով:

Տպագրության հանձնվող ներկա վեց վավերագրերը վերցված են նշված ֆոնդի նյութերից: Այդ վավերագրերը, մոտ փաթուռի մամուլ այլ նյութերի հետ միասին, մենք և մեր ընկերը՝ պատմական գիտությունների թեկնածու Դ. Գաբրիելյանը Հայկական ՍՍՌ Պատմության և գրականության ինստիտուտի

հանձնարարությամբ, նշված արխիվում ընդօրինակել ենք 1937—1938 թվականներին: (Մեր հավաքած նյութերն այժմ գտնվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի տրամադրության տակ):

Հրատարակվող վավերագրերի մասին քիչ իրողաֆիկ տեղեկություններ տպագրվել են «Собрание актов, относящихся к образованию и торгово-армянского народа» աշխատության մեջ:

Տպագրվող առաջին վավերագիրը — Նոր-Ջուղայի հայտնի առևտրական կողմից Զաքար Սահրատյանի (Շարիմանովի) 1660 թվականի դեսպանական պրիկազին ուղղած գրությունն է՝ իր նվեր բերած «Աղամանդյա գահ»ի վրա եղած ոսկու, արծաթի ծանրության և թանկագին քարերի քանակի մասին: Իր այդ գրության մեջ կողմից հրաժարվում է գնահատել գահն այն պատճառաբանությամբ, որ այն նվիր է ուղարկված իր հոր կողմից, իսկ հայրը գին չի նշանակել: «Իմ խէր սիրեց մեծ թաքավորն, թախքն թամամէց, ինձ արեստ՝ թէ տար թաքավորին փեղքաշ արար, մեք էլ, մեր խէր էլ էտուր գնին խաբար չենք»: Այս վավերագրի ուսման թարգմանությունից մեջբերում է արեւ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը իր «Ново-торговый устав и договор армянской торговой компании в 1667 г.» խոսքագրով հոդվածում: Նա ապացուցել է, որ կողմից նվերի անվան տակ, փաստորեն, վաճառել է ինչպես գահը, այնպես էլ իրեն բերած մյուս ապրանքները (տե՛ս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 6, 1947 թ.): «Ալմազյա» այդ գահի և նրա շքեղ ձևավորման մասին հայագի-

տական գրականություն մեջ քաղաքականին խոսովել է: Հայտնի է, որ այդ գաղտնի, իր ժամանակին, գնահատվել է 22.589 ռուբլի:

Երկրորդ վավերագիրը — Խոջա Ջաքարի 1666 թվականի նամակն է Ալեքսանդր Միխայլովիչ ցարին՝ նկարիչ Բոգդան Սալթանովին Մոսկվա ուղարկելու, ինչպես և որոշ ապրանքներ Ռուսաստան բերելու թույլտվությունը ստանալու մասին: Խոջա Ջաքարն այդ նամակն ուղարկել է ջուղայի հայ առևտրական Ստեփան Ռամադամսկու հետ:

Ջաքարի այս նամակից երևում է, որ ինքը 1660 թվականին, Մոսկվայում եղած ժամանակ, իր հետ ցարին տարած նվերների մեջ ունեցել է Բոգդան Սալթանովի պղնձե թիթեղի վրա նկարած «խորհրդավոր ընթրիք», որը, ինչպես երևում է, բավ ընդունելություն է գտել արքունիքում: Ռուսական արքունիքն առաջարկած է եղել Խոջա Ջաքարին՝ ուղարկել այդ գործի նկարին՝ Մոսկվայում աշխատելու և աշակերտներ ուսուցանելու համար: Եվ Խոջան կատարելով արքունիքի հանձնարարությունը, այս պրոթյամբ հայտնում է, թե ուղարկում է հիշված նկարին: (Պրոֆ. Վ. Պարսաձյանն իր մի հոդվածում, «Լեռնարդո դա Վինչի և հայ կուլտուրան» խորագրով, որը տեղավորվել է «Գրական թերթ»-ում (1952 թվի ապրիլի 19, № 14), մեջբերում է արել այս վավերագրից և այն կարծիքը հայտնել, որ նշված նկարը Բոգդան Սալթանովն արտանկարել է Լեռնարդո դա Վինչիի «խորհրդավոր ընթրիքը» հայտնի նկարից):

Երրորդ վավերագիրը — Խոջա Ջաքարի 1666 թվականի գրությունն է Դոմայի գրագիր ռմե Աբազ Իվանովիչին այն մասին, որ ինքը, իր խոստման համաձայն, ուղարկում է Բոգդան Սալթանովին Մոսկվա և խնդրում է ներկայացնել նրան արքունիքին, որ օգտագործեն նրան իր մասնագիտությամբ:

Չորրորդ վավերագիրը — Գրիգոր Լուսիկովի 1671 թվականի գրությունն է Ալեքսանդր Միխայլովիչ ցարին: Նա իր գրության մեջ հայտնում է, որ ինքը, իր ապրանքներով և մարդկանցով, եկել է Հաշտարխան և թույլտվություն խնդրել Մոսկվա գնալու համար: Նա միաժամանակ հաղորդել է, որ ինքը շահից առացած մի շարք հանձնարարական գրություններ է բերել և խոսելիք ունի վրաց թագաժառանգի, դադախի և Հաշտարխանի թալանված առևտրականների մասին, ուստի և խնդրում է ճանապարհչին կանգնեցնել այն պատվիրակությունը, որն ուղարկվում է Պարսկաստան՝ ծանոթանալու համար իր բերած գրությունների հետ և այնուհետև, եթե անհրաժեշտ գտնեն, նոր միայն ուղարկել:

Հինգերորդ վավերագիրը — Գրիգոր Լուսիկովի 1671 թվականի հուլիսի 27-ի գրու-

թյունն է այն մասին, որ ինքը իր ապրանքով նստած է Ականում և սպասում է արքունիքի թույլտվությունը՝ մեկնելու դեպի Մոսկվա: Նույն գրության մեջ նա հայտնում է նաև, որ ինքը բերում է շահի մի ուղամբ (պաշտոնական գրությունը)՝ 1670 թվականի մարտի 21-ին կնքված առևտրական պայմանագրի մասին, ինչպես և Նոր-Ջուղայի առևտրականների իրեն տված լիազորագիրը՝ արքունիքի հետ առևտրական բանակցությունները շարունակելու մասին:

Եվ, վերջապես, վեցերորդ վավերագիրը — Գրիգոր Լուսիկովի նամակն է ցարական արքունիքի օկուբիլի Արտեմի Սերգենիչին՝ նրա ընկերներին, ուր նա նշում է այն փոփոխությունները, որոնք շահի կամ Նոր-Ջուղայի հայ առևտրական կամպանիայի հանձնարարությամբ ցանկանում է առաջարկել 1670 թվականին կնքված առևտրական պայմանագրի մեջ:

Վավերագրերը շնայած այս կամ այն շափով հայտնի են պատմագրության մեջ և նրանցից անգամ մեջբերումներ են արված մի քանի ուսումնասիրությունների մեջ, սակայն ամբողջական ձևով դեռ չեն հրատարակված և, ինչ խոսք, արժեքավոր են հայ-ռուսական հարաբերությունների պատմության համար: Պիտի նկատի ունենալ, որ 17-րդ դարից հայ-ռուսական հարաբերությունների վերաբերող շատ քիչ հայերեն վավերագրեր կան և նրանց պատմագիտության համար մեծ արժեք ունեն:

Վավերագրերը արժեքավոր են նաև մեր բարբառների պատմության համար, որովհետև նրանց մեջ գործածված լեզուն գավառաբարբառ է՝ իր ժամանակի նոր-ջուղայիները:

Վավերագրերը գրված են անգրագետ լեզվով, և այդ պլեյի է բարձրացնում նրանց արժեքը, որովհետև նրանց հեղինակները ի վիճակի չէինելով դիմելու գրական ոճի, գրել են այնպես, ինչպես իրենք խոսել են և արտասանել, իսկ գրի առնված այդպիսի հարազատ, անխաղախ գավառաբարբառը 17-րդ դարից՝ մեզ համար ունիկալ արժեք ունի:

1 Մեր հոդվածը գտնվում էր տպագրական պրոցեսում, երբ Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսավ «Армяно-русские отношения в XVII веке» խորագրով վավերագրերի ժողովածու, ուր և գետնադրած են մեր այս վավերագրերը: 5-ը: Ավստրիականացով, որ նշված վավերագրերի մեր վերծածությունը զգալիորեն տարբերվում է ժողովածուի հրատարակիչների վերծածությունից, ուստի և ավելորդ չենք համարում հրատարակել մեր վերծածությունը ևս:

1. ԽՈՋԱ ԶԱՔԱՐԻ 1660 ԹՎԱԿԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ,

Թախտն՝ ԻՋ (26) ճոթ ոսկին՝ մեծ պղտրիկ ԻՐ (28) ֆունթ ալ, Ե (5) ճոթ առնաթն Ը (8) ֆունթ ալ, ԸՃՂԷ (897) ալմաղ ալ՝ ԲԷ մեծ, Թալ պղտրիկ, ՌԲՃՂԸ (1.298) եաղութ ալ, ԺԸՈՒ (18.030) փերուզ ալ, Տէր Աստուած տալ՝ ուրախ վայելի։ Մեք մեծ թաքավորին սաղլուղութին ի վատ ոչինչ չենք ուզում. սիրէց, աղարկէց, մեղ արեւտ իմ խէր, ինձ ալ տվէլ, գինին խարար չեմ, ումբրն թաքավորին, իմ խէր սիրեց մեծ թաքավորն, Թախտն թամամէց, ինձ արեւտ՝ թէ տար թաքավորին փէշքաշ արար. մեք էլ, մեր խէր էլ էտուր զնին խարար չենք, ումբրն մեծ թաքավորին։

(ЦГАДА. Ф. Сношения России с Арменией, 1660 г., д. № 1, л. 35).

2. ԽՈՋԱ ԶԱՔԱՐԻ 1666 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՑԱՐԻՆ



Բաժինու Միլատարիու, Վէլիքիմու Հասուղարիու, Յարիու, ի Վէլիքիմու Քանազիու [Ալէքսի]՝ Միքայէլովիճու, Յաէիայ Վէլիքիալ, ի Մալիայ, ի Բիլիայ Ըռասիի Սամաղէոսու բի[տ] շուում օփլի վաշ Դասուտար Բալալա Ջ[ա]թ[ա]-ր[ա]լայ Սահրատի որդի զգլաշկայ գէմլայ՝,

Էստի յառաջ փոքր ծառէդ մին պղնծէ թանուքի վերայ, Աւաք Խինզարաթ օրէն տնօրինականն՝ Էաշած, մեծ թաղաւորին գլուխ ինք տըւլ, շաղաւաթ էր արարէլ, նորա շինողն ուղեցել էր էն քարխանումն, որ շինվել էր, մին զապիլ ուտայ կէր, անունն Բուղսան, որ նորայ հունարն ամենու վերայ տոաւել էր. աղարկեցինք քրիստոսայչէն Մօսկովն, դոն. մեծ թաղաւորին գլուղուն տնոյ կատարեն, երբ թաղաւորին շաղավաթն [ի]նի, դոն։

Մին էլ, մեծ թաղաւորն, իւր փոքր զուկին, րապի զուլուղանի էր բուրմիշ արարէլ, Աստուծոյ ողորմութեամբն, ողջ հասիլ զնի։ Մեր խնդիրքն Աստուծ[ան]էլէն ալ, որ մեծ թաղաւորն շաղաւաթ առէ, մին Ճ ԲՃ (100—200) սօմ թահ-լիլ տալ. մին հուքմ՝ թէ զնան իւրէնք կամ Ջ[ա]թ[ա]լէն թաղաւորին յայեղ իքմին

1. «Թախտ» ասելով Խոջա Զաքարի կհատի ունի «Ալմաստայա կոչվող զահր, որն այժմ գտնվում է Մոսկվայում, Կրեմլի զինապալատում».

2. «Ալէքսի» անվան տեղն այստեղ թողնված է լրրված, իսկ վերևում տրված է կապգրով։ Հետո, որպէս հարցանք, սովորութիւն է եղել պատվանդանները շարել տեքստում, այլ տալ վավերագրի սկզբում զարդարված կապգրով։

3. Այս պարբերութիւնը, որ հայտնաւորուեցին է, թարգմանել կարելի է հետեւյալ ձևով. «Աստուծոյ ողորմութեամբ, Մեծ Թաղաւորին, Յարին և Մեծ Իշխանին՝ Ալէքսի Միխայլովիչին, Համայն Վելիկայա, Մայայա և Բելայա Ռուսիո Ինքնակային Երկրպագում է Ձեր Թաղաւորական ստորակ Սահրատի որդի Զաքարիան՝ պարսից երկրից»։

4. Աւաք Խինզարաթ օրէն տնօրինականն — Եկատի ունի Ավաղ Հինզարաթի օրվա Խորհրդավոր բնթրիքը։


բհամ առնն, բերենն, Թահվիլի մապլաղն հքմումն գրվի ո՛չ, որ տեղէքս՝ որչանք ուղեքն, էնչանք ասէնք, գրա մեծ ֆազաւորին ուզեցած ըռօսպիսումն քաղի ման կայ, չուրի [ա]րդ, ըռտւտնաթ ընի, բերել ընենիլ, էն Թահվիլին անտանօքն էն հքմումն արդ կառնք, Աստուծով, հասիլ կառնք, բերենք. առանց էտ՝ հուքմ, Թահվիլ, բերել ընի՞, Երբ ասուեմ անք էսպէս բան անք շինում, տանում Մօսկովն մեծ Թազաւորին, ասում ան՝ լէվ ալ, Թահվիլ ինք, առ, ինչ կուզես շինէ, [ը]համ արայ, վեռ գնայ, Երբ փոքր դուպդ Թահվիլով գոյ դուպուդ, ո՛չ մեծ Թազաւորն հազ կառէ, ո՛չ իւր փոքր դուպին պարզերեսութիւն գնի: Ումի[տվալ] ա]նք՝ ամեր խնդիրքն շաղաւաթ առես:

Պաւտլուի մէնայ վէլի[քի] հաստատար, միլսւէրոտի հաստատար ծար, վէլիքի քնազ [Ալեքսի] Միխայէլօվիճ, [Ֆսեի]այ վէլիքիայ, ի Մալուիայ, ի Բելիայ, Ռասի Սամադէոսեց, պօթալուի մէնայ՝:

Շնու տված էջի վրա հասցէն՝ «Մօսկօվն, մեծ Թալաւորին արգէն»:

(ЦГАДА, ф. Синопляна Россия с Арменней, 1660 г., д. № 1, л. л. 92—93).

3. ԽՈՋԱ ԶԱԲԱՐԻ 1666 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԴՈՒՍԱՑ ԱՐՔՈՒՆԻՔԻ ԳՐԱԳԻՐ ԱՂՄԱԶ ԻՎԱՆՈՎԻՉԻՆ



Տ[է], Ա[ստուա]ծ տայ մեծ [Թազաւորի]՝ շուքն, շաղաւաթն գովելի պարոն Այմազ Իվանովիճին վերայ լինի: Արդ ու բանդակի լինի քո հրամանաց դուրուզումն՝ էստի յառաջ քամինէդ մին պղնծէ Թանուքի վերայ Աւաք Հինգշաւաթ օրէն մաճլիս քաշած, մեծ Թ[ա]զ[աւոր]ի գլուխ անք տուէլ, շաղաւաթ էր

5. ԴՅԻՅ— բնագրում՝ «կենի», բայց իմաստից երևում է, որ գրչական սխալ է, պիտի լինի՝ «շնի»:

6. Այս պարբերութիւնը, որ հայատառ ոտաներն է, հետեւյալ բովանդակութիւնն ունի: Խղճա ինձ Մեծ Քաղաւոր, Ողորմած Քաղաւոր, ծար, Մեծ Իշխան Ալեքսի Միխայլովիչ, համայն Վելիկայա, Մալայա և Բելայա Ռուսիո ինքնակալ, ողորմիր ինձ»:

7. Անկլումավոր փակագծի մեջ տուեալ «Քաղաւորի» բառը քողեմած է չգրված և տրրված է վավերագրի սկզբում կապերը դարդեղորով:

լէլ ծառայէի: Նորայ շինուլն ուզեցէլ ին՝ էն քարտանումն, որ շինվել էր, մին ուստայ կէր, որ նորայ բանն, հունարն ամենու վերայ առաւել էր, անունն Թանրիվէրան՝ որ է քրիստոնէի բառ՝ Բողոքան, ըսաղի արարինք, մին տղով, ջզվի էլ իբրին տղինք սարմայեայ գէյի, որ էնտի խառնելով գոն, որ շուրէ տեղդ մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին շատ վարար շլինի: Տեղդ տարն մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին ալ, դորայ լել հունար ուսանիթ ունի, քարաւ՝ առես, մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին արդ առես, երբ Ա[ստուա]ծ տայ դուլուդ աստուքիդ տոն, որչանք մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին կամքն այ, դուլուզն տեղ կատարես, երբ դորա սանիթէն ըսաղի կու լինէք, կու խովանէք, դարիդ լինի, երկու սահապուդուք նսաղաշ աշկերտ դէյի դրայ կշտին կու դնէք, դրայ սանիթքն շուրի խինդ վեց ամիս սովորին, դորայ ըստիթաթ լինի, որ գոյ, երբ դայ շուտ ըսաղի գոյ տեղս, ինչ սահապուդուք ուստի որ թաքլիք առենք, շուտ կաղարկենք, Քրիստոսայ աղորմութեամբն, մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին շաղաւթ առես, նիաթ ունիք, որ գոնք ուխտ, մեծ թ[ա]գ[ա]ւ[ա]րին դուլուզն տեղ կատարենք, Ա[ստուա]ծ տայ, կու խնդրեմ քո հրամանուցէն, շուրդ, շաղաւթդ քո ծառայուցէն պակաս չնի: Մառայուցդ թէ մին հասապի մաթլապ լինի, հասիլ առես, դոր յառաջմէ շաղաւթ ունիր, քանց էն առաւել շաղաւթ առես: Ումիտվար անք Քրիստոսէ: Քո հրամանուց արարածին աւելն, լէվութի[ւն] տայ քո հրամանուցն, քո ազիզ գովելի որդոցն: Գրեցաւ գիրս թիւն Ռ Ժ Ժ Ե Ե (1666), մարտ Ժ (10), օրն շաբաթ: Ի քո ծառայ Սա[հ]րաւի որդի Ջարարայ խնդրողէ դրայ բախտ:

(ЦГАДА, Ф. Словения России с Арменией, 1666 г., л. № 1, л. л. 97—98).

4. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻԿՈՎԻ 1671 ԹՎԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԽԱՅԼՈՎԻԶ ՑԱՐԻՆ

Մարհու, Ասուրարու, ի Վէլիքայմու Քրնայդու էլէքսէիու Մոպսայէլվիչու, Յըսէա Վէլիկիեայ, ի Մալիեայ, ի Բէլիեայ Ընէսի Սամայդէրժէցու բիւտ շրլում խօլօսի վաշ օպլի շախվի պասլայնիշըշկայ Գրորշկայ Լոսիկով Սըֆայ-հայնէց:

Որ ապրէլի Ին (25) եկէլ այմ Հաշթարիայն, կացէլ ամ, շուրի մեծ թաղաւորին ուկազ է եկէլ, էն շաղն բայայրին Իվան Բուլգայնվիչն բանդէտ ըսայվանայ է արարէլ՝ գուլման ինք Մօսքով մեծ թագաւորին դուլաղըն: Սարթաւայդա վէր, Ջըգթարուսումն, քո մեծ թագաւոր պասլանիկ էնդրէ Պըրկըլօնցկի ուրիշ կողմի շըրօվն հանց եկայց, տեսնուլ չըկարացի՝ թէ յիմանի՝ ի՞նչ մաթլապի խամար էր գընաման շայ Սըլեմանին դուլուզըն. թէ որ գոռէի ծարայվիշին բանին համար, կամ թէ զազախին բանէրին համար, կամ թէ Հաշթարիանայ թալանած քուփիլիանոց բանին համար է գընաման, շըֆայդաթ արա, մեծ թագաւոր, չափար աղարկէ Հաշթարիան՝ գընայ ոչ, որ էս Գ (3) բայնս բերում այմ դուլուդըտ, յիմանայս, էն շաղն ինչ լազումայ է, գրես, աղարկես շայ Սըլեմանին, որ քո, մեծ թագաւոր, փառքիտ նելում լինի: Թէ որ ուրիշ մաթլապի համար է գընաման, Աստուած ուր բանըն աջողի, գընայ բարին:

Ճ. Հայտառ ուսանին այս պարբերությունը հետեւյալ բովանդակությունն ունի. «Ճարին, Թագաւորին և Մեծ Իշխանին՝ Ալեքսի Միխայլովիչին, համայն Վելիկայա, Մալայա և Բելայա Ռուսիո Ինքնակային երկրպագում է Ձեր ստրուկը, պարսկական ընդհանուր պատվիրակ Գրիշկա Լոսիկովը՝ սպահանքիս:

Բայարին քրնագ նաքով Մըքիթավիչին էլ էսպէս գրէլ այմ թէ՛ մեծ թագաւորին պասլայնիկն, որ գրնաման ալ զամրում, թէ էս բանէրիս համար է գրնաման, պախես, գրնալ ոչ, չուրի չափար այմ աղարկէլ Մօսքով, մեծ թագաւորին արգամ արարէլ Ականես, մեծ թագաւորին ուկագն, թէ որ ուրիշ բանի համար է գրնաման՝ պախես ոչ, Աստուած ուր բայն աջողի:

Դարձեալ, Զ (6) տարի ալ, որ մեծ թագաւորին դուկուղէն ընկնէլ այմ, գրնացէլ զամրում, Բ (2) տարի թամայմ շալ Սըլեմանին դըրուցըն կացէլ այմ Գլիսովս, ապրանքովս, խուզովս քն՝ մեծ թագաւոր. դուկուղ այմ արարէլ վասըն քըրիստոյնութենէն խաթիր համայր. Աստուած սաղ թուղու, բանի կենդան մնամ, էլ դուկուղ կանոմ քն, մեծ թագաւոր:

Դարձեալ, շալ Սըլեմանին ըռտախաթ ըողամ արեստ, որ խալ սովդայդարէրըն խում ապրիշումով, դէրիեալ ապրանքով դոմ Ըռուսըն էն դարաւումն, ինչպէս մեծ թագաւորն շըֆայղաթըմալ դիր է տվել, խէն դըմդէն տան, գրնալն գուն. մին տարէն մոտ ԸՌ (8.000) խալս շալին քուլի երկրումն ապրիշում դուս գկու, որ մին խալն Զ (6) փուտ ալ, ողշ գը կու Ըռուսըն:

Դարձեալ, բայն շատ կալ, մեծ թագաւոր, քո սարքարին պէտկ ալն՝ ո՛րն աշկարէ, ո՛րն ծածուկ:

Միլայեղդի Ասուղար ի Վէլիքայմու Քրնագ էլէքսէ Միխայէլովիչու, Ֆըսէա Վէլիկիեալ, ի Մալիալ, ի Բելիեա Ըռէսի Սամարէրժէց, պօժալէ մընեալ՝ խօջով վաշ օփլըմ⁹, լուրմիշ արալ պասլայնիկըն Հաշտարխան պախեն, չուրի ես գում Մօսքով, համէն հաֆալ մեծ թագաւորին ծածուկ արգամանմ, էն շաղն ինչ լագումալ ի՛ շալ Սըլեմանին գըրես, որ իմ աշխատանքն էլ զալ չընի, որ շաֆալ շատ եմ քաշէլ: Մեզ ֆարդ էր քն յիմաց անխըք, ալ դալ ուրբն մեծ թագաւորին ալ:

(ЦГАДА, ф. Скопенная Россия с Арменией, 1672 фев. 22—1673 фев. 21, д. № 1, л. 24).

5. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻԿՈՎԻ 1671 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ՆԱՄԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՑԱՐԻՆ

Սարու, Ասուղարիու, Վէլիկայմու Քայնալգու էլէքսէ Մուխայէլովիչու, Ֆըսէեալ Վէլիկիեալ, ի Մալիալ, ի Բելիեալ Ըռէսի, Սամարէրժէցու բիտալըլում խօջով վաշ օպչի շախվի օպլըստի պասլայնիքըկալ Գըրիշկալ Լուսիկով¹⁰:

Որ անց[ե]ալ տարին, Հայոց թվին ՌՃԺԹ.ումն (1670), շամա մին¹¹, ապրիշըմին մամըլէն շինվեցաւ, շալ Սըլեմանէն ըռուսխաթ ելաւ, ըռայղամ տվին, որ խում ապրիշումով, դէրիեալ ապրանքով մեր աշխարքին թունայրըն գոյհն Ըռուսըն, մեծ թագաւորին թամդէն, ինչպէս՝ զարար անք արարէլ, տայն, դընալն Ֆըռանկըստալն: Մեծ թագաւորին մեզ տվալ շըֆայղաթըմալ դիրումն, ինչպէս որ գրալ ի, էնդի օրինակըն վեոին, շալին տված ըողամումն գըրեցին: Շալին ըողալմն ինձ խեստ բերում ալմ մեծ թագաւորին դուկուղըն:

9. Հայտատու ոռուսներն այս պարերուքայն բովանդակութիւնը հետեւյալն է. Ռըդորմած թագաւորն է Մեծ իշխան Ալեքսի Միխայէլովիչ, համայն Վեպկալա, Մալայա և Բելայա Ռուսիո ինքնակալ, ողորմիր ինձ, Ձեր բոլորի օտուկին...:

10. Տե՛ս հախորդ վավերագրի սկզբի պարերութայն թարգմանութիւնը:

11. Շամա ամսի 1-ը Համապատասխանում է մարտի 21-ին:

Դարձեալ, մեր քալանթարն, կուսանէքն արդայ այն գրեւ մեծ թագաւորին, համէնքնին արդին յետ կտաւն ձեռն ալն դրեւ, մտրեւ՝ թէ ինչ որ ֆաղիբայ Մօսքօվայ մեծ թագաւորին ուղղութեան հառէշմէ շինէ հալմ, կամ էլ ինչ բայն յետու շինեմ, դարու ալ էս արդէն էլ բերում ալմ մեծ թագաւորին ղուլուղն:

Դարձեալ, շայ Սըլեյմայնըն ֆաղիբայ շրֆայլաթ արար՝ բուքմիշարար նամայ է տվէ՝ թէ տայր իմ ախօթ՝ Մօսքօվայ թագաւորին, բերում ալմ մեծ թագաւորին ղուլուղն:

Դարձեալ, գուռնի ձարայվիլին բայն էլ լէվ գրնի, ինչպէս մեծ թագաւորին մաթլապըն ալ, ղուլուղ համ արարէլ, որ կը շինվի:

Դարձեալ, բայն շատ է հանց կացէլ, ողջ լէվ գում՝ մեծ թագաւորին ղուլուղն արգ առեմ:

Դարձեալ, եկի Շամբախի. մեր շողեցիք շամ ելայն խում ապրիշումօվ, դէրիեալ ապրանքօվ՝ թէ գուն ըռուսին երկիրըն: Խօվ խարար արեկ՝ թէ քամ-զաթ վազախըն հաշթարխանցիք խարէլ հայ, բերթըն զաֆտէլ, սօվդայզարէ-րըն թալանէլ: Մեր շողեցիք էլ լըսեցին, գընացին Խոռմացառուն՝ թէ էս մին սաֆարըս առենք, շուրի ըռուսին երկիրըն թամիզվի, էն լաղն գուն: Ալ դեալ ժԴ (14) ամիս ալ, որ ֆաղիբայ, իմ ըռմիսթօվըս, նրատէլ ալմ Ականում, որ մեծ թագաւորին քանաղըն լաշկարօվ գոլ, Հաշթարխան մրտու, վէր կամ գում մեծ թագաւորին ղուլուղն:

Դարձեալ, էսօր Ե (5) տարի եալ, ֆաղիբայ էս ջաֆէս քաշում հալմ՝ թէ լանքին մեծ թագաւորին ուղղութեան պարզերես [լի]նիմ:

Միլայսէրդի Ասուղար փ Մար Վէլիկիթամու Քանաղ էլէքսէ Մուխարէլվիշու, Յրսէա Վէլիկիեայ, ի Մալիայ, ի Քելիեայ Ըռէսի, Սամայդէրօէց, պոժայլէ մանայ խօլօփ սըվօ օփլըվօ¹², շֆեայլաթլըմայ գիր ալարկէ Հաշթարխանայ բանաղ Բօվադին, որ ֆաղիբայ պախեն ոչ, շոստօվ մեծ թագաւորին ղուլուղն կում, որ իմ շոստօվ գուլըն մեծ թագաւորին ամենայն կողմանէ լէվ ալ, խաղինին շախ եալ:

Գրվեցաւ Դարբա[ն]դ թվին ՌՃԻ.ումն (1671), դամար ամսին Թ.ումն (9-ումն)¹³, պատկեր օրն Ե.շաբաթ (հինգշաբթի):

(ЦГАДА, ф. Скопения России с Арменией,
1672 фев. 22—1673 фев. 21, д. № 1, л. 37).

Ռ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԻԿՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՕԿՈՆԵԶԻ ԱՐՏԵՄ ՍԵՐԳԵԵՎԻՉԻՆ ԵՎ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Այնպիսիեայ Առտեմտոն Սէրգէվիչ, դումնայ դիաք Գրիգոր Կարփօվիչ, որ բնկերանոցըն արդ լինի, որ ես՝ Գրիգորըս ձեր ղուլուղումն աջի թէ՝ Քրիստոս արեկ հաշթարաքըս Մօվսէսի գրածն պակասըն լըցի, չե՝ թէ պակասացանեւ: Էս խօսեղըս էնտուր խըմար աջի, որ մեծ թագաւորըն մեր խաչէրին խըմար շրֆայլաթլըմայ գիր էր տվէլ թէ՝ խում ապրիշումօվ, դէրիայ ապրանքօվ գոլն Ըռուսըն, մեծ թագաւորին դըմղէն քըրէն տայն, ինչպէս որ դրայծ է, վօլնայ, դընայն նէմցու երկիրըն: Ես՝ Գրիգորըս, մեծ թագաւորին շրֆայլաթլըմայ գիրըն տարայ, շայ Սըլեյմայնին նըշանց տվի: Ուրէնց գօստուիթէն, ախբէրու-

¹² Տե՛ս Պախարգ վալիքադրի Նօլն բովանդակութեամբ վերջորանի թարգմանութիւնը:

¹³ Ղամար ամսի 9-ը համապատասխանում է հուլիսի 27-ին:

թէն սէրին համար զարուկ արար, բուրմիշ արար, գրցեցին շային զըֆտարուն, Մեծ թագաւորին գրումն ինչ գրած է, պակասացանելուն նըմայն շեւ ճնտուրացի թէ՛ Գրիստոս արեկ Մովսէսի պակասըն լըցել, շեւ թէ պակասացանել, Այդայ շըֆայդաթ կառէք, մեծ թագաւորին արդ կառէք, էլ ինչ պակաս է մնացել, լըցէք:

Գարձեալ, շայ Սըլեմայնըն ասաց թէ՛ իմ երկրումն համէն Գ Գ (3—4) օրէն ճանապարհում Ա (1) ըռտար ամ զըրէլ, որ մին բռնէն Ծ (100) դիան, ԾՍ (150), ԲԾ (200), Լուրի ԳԾ (300) դիայն ան¹⁴ լինք առման, քուլի էն խըսէպեցին, Ծ.ին Բ (հարուրին՝ երկու) դառ խասաւ ոչ, Ում հագում որ սովդայգարի ապրանք կտրի, իմ ղուկերըն կու գըդանին, կը տայն տէրըն, թէ գըտանին ոչ, թովունըն կը տայն էս սախմանքովըս: Իմ երկիրըն էսպէս յիստակ պախում այն, որ գող հարամի շեւ հասիզ գալման: Մեծ թագաւորին շըֆայդաթնըմայ գրումն որ ղըմդէն քըրէն գրած էր, շայ բուրմիշ արար, խըսէպեցին, որ շային երկրին խայ սովդայգարէրըն՝ խում ապրիշումով դէրեայ ապրանքով գոյ Ըռուարն՝ Զ (6) հասէն մին կը տայն մեծ թագաւորին խաղինէն: Շայ Սըլեմայնըն ասաց թէ՛ իմ երկրին ղըմդէն շըզվայ, սովդագարի գիախին ճանապարհըրումն օթայ ենք, սովդայգարի գիայն շեւ նըմայն, իմ ախրօր երկրումն ղըմդէն քուլիայ է: Գրէլ այ թէ՛ սովդայգարին ճանապարհին գիախըն քըրէքաշիներըն տայն, շայ Սըլեմայնըն ասաց թէ՛ պալքի քըրէքաշէրին փողն յասանի ոչ, էնտուր խըմար է գրէլ, թէ՛ խայ սովդայգարին Աստուած գիայն յոչ տայ, թաղմին քըրին փողէն թամամեն տայն, որ խաթիրշամ գոյն գընայն: համ՝ մեծ թագաւորին րովադէքըն ըռուարն երկիրըն պիրկ կու պախեն, շային երկրին պէս գող հարամի շեւ նըմայն:

Գարձեալ, նէմցու երկրումն մեր խայ սովդայգարէրըն պը կընայն, ալարայնըն կը տայն փոստըն, ինչ քաղաք որ ուղում նի՝ գընայ տեղն ապրայնըն սալամաթ լինք կառու, ինչ խալէըն ալ, կը տայն, թէ որ ղըռճվի կամ գող հարամի կամ կորցանեն թովունըն կը տայն, կուղէք խարցուցէք:

Գարձեալ, մեծ թագաւորըն բուրմիշ է արարէլ՝ թէ խայ սովդայգարէրըն խում ալրիղումով, դէրիայ ապրանքով գոյն Ըռուարն, իմ սըրադանումն կըռի լինի, ձեռ շեւ տալման՝ թէ գընայն նէմցայ, [թէ՛] Ըռուարումն ծախեն: Թէ որ առող չընի, ծախեն մեծ թագաւորին խաղինէն: Կամքըն մեծ թագաւորին ալ, ղաքուկ ունինք, էնպէս գընի, որ նոր շըֆայդաթնըմայ գրում ապրիշմին գին դնէք, որ առող չընի, էն դարաբովն ծախեն մեծ թագաւորին խաղինէն նաղտ փող լինք առում, որ մեր խայ սովդայգարերըն խաթիրշամ գոյն գընայն, Ֆըքը շառեն թէ՛ մեք որ գընայնք, ըռուարն պալքի սարադանումն կըռի նի, թուղուն ոչ նէմցայ գընախք, մեր ապրանքն ոտն գըձեն, լեծայն առում:

Գարձեալ, շըֆայդաթ արայ ալկալինճայ Աստէմոյն Աէրդէվիշ, դումնայ դիաք Գրիգօր Կարպիշ, մեծ թագաւորին շըֆայդաթնըմայ հառէշմի գրած գիրըն պակասացանել մէք, լուրի շայ Սըլեմանին ղըֆտարումն գըրվէլ ալ, նոր շըֆայդաթնըմայ գրումն մեծ թագաւորին մաթլապըն էլ եւլացուցէք, որ ախրէր շայ Սըլեմանին մաթլապըն էլ եւլացուցէք, որ Բ թագաւորըն էլ ուրախ նի, լուրի աշխարքիս վերլըն՝ սէր, միալրայն:

(ЦГАДА, ф. Сводения Россия с Арменней, 1672—1773 г.г., д. № 1, л. 155).

14. «Գիայն անշ քառերիք հետո տողից վերն գրված է ասովս բառը, որը ասմանի աղավաղված ձևն է, գործածված «դինար» համար:

ՅԱՆԿ ՕՏԱՐ ԷՆ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԻԵՐԻ

[illegible]

շտապար	—	շնորհ, ողորմութիւն, հրա-	ստիպար	—	զնայու ձեռնարկ
		ման	սրբապա	—	սարման
շրփայղաբերան, ցիր	—	հրամանագիր	սով	—	սուքի
շուք	—	հոգանի	սովայրար	—	սուտրական
տարե ցրցել	—	վարկարեկել	վեռի	—	վերցրի
տերազ	—	հրաման	վայրայ	—	տուտական՝ ԵՐԱՆԻՆ՝ —
ուղտուտ	—	սիրտ համար			ազատ
ուկր	—	կամք, ցանկութիւն	լալանքար	—	զեկավար, վարիչ
ուկտվար ան	—	հոտով նկ	լալգար	—	վառազգ
շանքի	—	որովհետեւ	լալիներ	—	ելիւշդ, ողորմելի
շափար	—	սուրհանդակ	լալազ	—	սուտական՝ ԵՐԱՆԻՆ — իրական
շուրի	—	միշտ որ	լալալ անել	—	ողորմելի, խղճար
պատշաճելի	—	պատկերակ	լալալա	—	արհեստանոց
պիրի	—	ամուր	լե	—	քեզ
շամ լինել	—	հալաքվել	լըքէլալ	—	քրեհար
շափա	—	նեղութիւն	լուլի	—	ողջ, բոլոր
ջրզլ	—	փոքր, շնչեղ, ամուշան	լուլի	—	մեծ, շատ
ջուկվել	—	լալանվել	լուլի	—	զիւրդ, անհարական
ջուկվել	—	ժողովուրդ	լուլի	—	անլալանել
սալալալ	—	անվճար	լեկացնել	—	հալանալ լինել
սանալալալ	—	հմտա՝ արհեստի մեղ	սրալ լինել	—	լանդ
սալլալալալ	—	ողջութեան	փալի	—	լալալալ, անհարական
սանքալ	—	արհեստ	փարզ	—	նվորալ
սալալալալ	—	դրամագլուխ	ճարակարստալ	—	միտք
սալալալ	—	արքունիք	փիւր	—	





ՌՈՒԹԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ

ՆԵՐՍԵՍ ԱՃՏԱՐԱԿԵՑՈՒ ԿԱՏԱՐԱԺ ԽՈՃՈՐ ԳԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

«Միքէ Ներսէս Եպիսկոպոսը շէ՛ր, որ զբաժ Գալկէիքի հետ մտալ Հայաստան ու հայոց մեծ մասը Բաղդադ, հորդորելով՝ ոսի ձեռի տակը բերէց»:

ԽԱՉԱԳՈՐ ԽՐԱՎՅԱՆ, ԵՎԷՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝



Բթա Միրզան, ինչպէս Հայանի է, 1826 թվականի Հուլիսի 25—26-ին, 60.000-անոց բանակով, առանց պատերազմ հայտարարելու, հարձակվում է Ղարաբաղի վրա և պաշարում Շուշին: Այդ նույն ժամանակ Երեւանի սարգարի զորքերը մտնում են Փամբակ և Շորադձալ: Այսպիսով, սկսվում է ռուս-պարսկական պատերազմը: 1826 թվականի աշնանից ռուսական զորքերը համախմբելով իրենց ուժերը, տեղական ժողովուրդների ոգևորությամբ, մեկը մյուսի հետեից հաղթանակներ են տանում պարսից հրոսակների դեմ:

Գուցե ո՛չ ոք այնքան չէր ոգևորվել պատերազմի սկսումով, որքան Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին: Հայրենասեր հուշերականը այդ պատերազմի մեջ է սեւել: Հայ ժողովրդի վաղեմի երազանքի իրականացումը: 1826—1827 թվականի Ամռանը գրած իր նամակներում և գրությունների մեջ նա ամենքին ավելում է պատերազմի լուրը: Խրախուսել, հորդորել ոչինչ չխնայել Հայրենիքի ազատութեան համար:

«Հասաւ ժամը,— գրում է նա իր բարեկամներին,— երբ աչքով պիտի տեսնենք Արարատեան աշխարհի և Հայոց ազգի ազատութիւնը, հասաւ ժամը. երբ Մայր Աթոռը պիտի վերականգնէ իր վաղիմի անկախութիւնը. ոտքի՛ կանգնէք, հայոց քաջեր, թոթափեցէ՛ք պարսից լուծը, ուրախացէ՛ք ալեգարդ Մասիսին, մի անկամ արիւնո՛վ ներկեցէք հայրենի հողերը ու ապա

ապրեցէ՛ք ազատ... ժամ է արդէն, օ՛ն անգր... հիմա՛յ— կամ երբէ՛ք...»:

Պատերազմն սկսելուն պես, Ներսէսն անմիջապէս գործի է անցնում. նա հանդես է գալիս ոգեշունչ մի կոչով՝ ուղղված Անդրկովկասի հայութեան, որի մեծ նկարագրում է հայերի անտերունջ վիճակը. պետականութունից զրկված լինելը և այլն ու հորդորում հետևել իրենց ազատասեր պապերի քաջագործության օրինակներին, տնվախ դուրս գալ և փովել թշնամու դեմ: «Յիշեցէ՛ք ձեր հարց մեծամեծ ախրագործութիւնները,— գրում է նա,— և անմահնելի առաքինութիւնները: Դուք նոցա որդիքն էք, նոցա արիւնը ես է զալիս ձեր երակներում... Մի՛ վախիք պարսից ձայնից և աղաղակներից: Նոցա ընդ որ ոյժը ճշի և սպառնալիքների մէջ է, և ո՛չ թէ ճշմարիտ զօրութեան և խելացիութեան... Արիացէ՛ք, մի՛ վախիք, նոցա յանկարծակի յարձակումը անդէնք և խաղաղ շինացոյց վրայ, չի կարող սասանեցնել Ռուսիոյ Օգոստոսփառ կայսեր անյաղթելի զօրացը:

Հայրենասեր և իր հոտի անձնվեր հովիվը Մակարայեցու խոսքերով է ոգևորում իր հոտին և հորդորում պայքարել մինչև վերջ: «Մեռցուք քաջութեամբ ի վերայ եղբարց մերոց, և ոչ խառնեցուք զանուն վատութեան ընդ արուքիւնս քաջութեան... Դիմապրեցէ՛ք թշնամուն և սորա արքանակներին կամ ռուսաց զորքերի հետ միասին և կամ թէ մի

1. Ա. Երեցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեանը և Կովկասի հայք, մասն Ա, Թիֆլիս, 1904 թ., էջ 268—269:

ուրիշ կերպ, որ աւելի յարմար կը լինի ներկայ աւազակօրէն յարձակմանց միջոցին, իսկ թէ հարկ լինի, մի՛ խնայէք ձեր արեան վերջին կաթիլը...²»

Այսպիսով, Աշտարակեցին իր այս հայրենասիրական կոչերով պատերազմի մարտա-

կան հատուկ հրովարտակ է ուղարկում Աշտարակեցուն՝ հայտնելու ժողովրդին արքունիքի գոհունակութիւնը հայերի ցույց տված հավատարմության համար, հույս ներշնչելով՝ որ շուտով նրանք կազատվեն թշնամու լծից, ներսես Աշտարակեցին հազարավոր



Ներսես Աշտարակեցի

հրավեր շեփորն է հնչեցնում ընդդեմ անողորմության թշնամուն:

Հայոց աշխարհն ուրախութեամբ է ընդունում հեղինակավոր հոգևորականի կոչը և անում կարելին՝ ուսա զորքերին օգնելու համար: Այդ բացահայտ տեսնում էր ոռոսաց արքունիքը և քաջալերելու համար կայսերա-

օրինականերով, հայերեն և ռուսերեն, տպել է տալիս հրովարտակը և ցրում, կցելով զրան իր քրտջալիրական խոսքը. «Քաջալերեցարո՛ւք միաբան ռուհասարակ հարգ և որդիք, ծերք և տղալք, և դձայն ցնծութեան ուրախութեան ձեր տարածեցէ՛ք լազգս ձեր՝ զի ձեր է յաղթանակն և զաւար կայսերական մշտնջենաւոր ոգորմութեանց հարուստ վանիլլութեամբ ժառանգեսցիք յայսմհետէ դուք

2. Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայր, մասն Ա, Քիֆլիս, 1894 թ., էջ 241—242:

և որդիք որդուց ձերոց յաղգս յախտե-
նից...»³

Մեծ հայրենասերը չի բավարարվում կո-
չով և ճառերով. նա ձեռնարկում է հայ կա-
մավորական գնդի համաքաղաքական և կազ-
մակերպման կարևոր գործը. նրա կոչերը
նախապես ուղի էին հանել արդեն բազմա-
թիվ հայրենասերների, Թբիլիսիի գեներալ-
նահանգապետ Սիպյաղինի ղեկավարությամբ
գործող հանձնաժողովը հայկական կամավոր-
ական գնդի համար շատ կարճ ժամանա-
կամիջոցում հավաքագրում է 600 հոգի, հա-
տույզ կանոններ են սահմանվում նրանց հա-
մար. նրանք պիտի կերակրվեին, հագնվեին
ու զինվեին, ինչպես նաև վարձատրվեին
կայսերական միջոցներով. Հայկական կա-
մավորական ջոկատների ստեղծվելը մի ա-
վելորդ անգամ ցույց տվեց հայ ժողովրդի
բուռն նվիրվածությունը Ռուսաստանին, Թբի-
լիսիի գեներալական նահանգապետ Սիպյա-
ղինը, խոսելով հայերի հավատարմության
մասին, իր 1827 թվականի մայիսի 27-ի մի
կոչի մեջ գրում է.

«Անցյալ տարի, պարսկական զորքերի մեր
սահմանները ներխուժելու հենց սկզբում,
հայերը աչքի ընկան իրենց անվախությամբ
թշնամու դեմ, զժրախտություններին դիմա-
նալու իրենց անխախտելի կայունությամբ և
դեպի քրիստոնեական կրոնն ունեցած ան-
սասան նվիրվածությամբ ու Ռուսաստանի
հանդեպ ունեցած օրինակելի հավատարմու-
թյամբ...»⁴

Ներսես Առտարակեցու ցանկությունն էր
անձամբ առաջնորդել հայ կամավորական
խմբերը և ուսաց առաջապահ զորքերի հետ
միասին արշավել ուղղակի Երևանի վրա.

1827 թվականի մարտ ամսին հայ աշխար-
հազորական ջոկատը, ներսեսի ղեկավարու-
թյամբ, զորահանդես է կատարում Թբիլի-
սիում. Ահադին խուռն բազմության ներկա-
յությամբ ներսեսը ձի նստած ընդունում է
զորահանդեսը. նա մի սրտաշարժ ու ոգեերիչ
ճառ է ասում և խրախուսում զինվորներին.

Հայոց գունդը, ընայած այս բոլորին, դեռ
բոլորովին պատրաստ չէր պատերազմի դուրս
գալու համար. ներսեսը ճանապարհ ընկավ
Ապրիլի 2-ին Թբիլիսիից Ջալալօղլի՝ ուսաց
առաջապահ զորքին առաջնորդելու, իսկ մա-

յիսի 15-ին վանքի եկեղեցում մեծ հանդի-
սավորությամբ կատարվեց հայ կամավորա-
կան ջոկատների երգման արարողությունը և
դրոշակի օրհնությունը. ներսեսը ներկա չէր,
յայց այդ օրը բազմահազար ժողովրդի ներ-
կայությամբ ոգևորիչ ճառով հանդես եկավ
հայրենասեր հոգևորական Հարություն քա-
հանա Ալամդարյանը. Մոտ հազար հոգուց
յաղկացած հայ կամավորական գունդը ուղ-
մաճախու մեկնեց 1827 թվականի մայիսի
կեսերին⁵.

Ապրիլի 2-ին ուսաց առաջապահ զորքը,
գեներալ Բեկնեղովի հրամանատարու-
թյամբ, Բորչալուից ճանապարհ ընկավ Երե-
վան. նրանց ուղեկցում էր քաջ ներսես Աշ-
տարակեցին. Ռուսաց զորքը նպատակ էր
դրել իրեն գրավել նախ էջմիածինը և ապա
պաշարել Երևանը.

Ամբողջ ճանապարհին ժողովուրդը մեծ
հրճվանքով և ուրախությամբ էր դիմավոր-
ում զորքերին, բազմաթիվ հայ գյուղացի-
ներ հոժարակամ միանալով ստվարացնում
էին հայ կամավորների թիվը. Ապրիլի 13-ին
ուսաց զորարանակը ներսեսի ուղեկցու-
թյամբ մտավ էջմիածին. Զինվորները ան-
շափ ուրախացել ու ոգևորվել էին վանքի
պարիսպների վրա տեսնելով ծածանվող ուս-
ական դրոշակը. Միաբանությունը խալով,
խաշվառով և զանգակների ղողանջով դիմա-
վորեց եկողներին. Զորքը մեծ ջերմեռանդու-
թյամբ մտավ Տաճար և սկսեց աղթել.

Ներսեսը նորից գավազանը ձեռքին ավե-
տեց միաբանությանը, թե հասավ ազատու-
թյան ժամը, պետք է արիանալ.

Շուտով Բեկնեղովի պաշարեց Երևանը,
իսկ մայիսի 12-ին Թբիլիսիից ճանապարհ
ընկավ ինքը Պասկևիչը ուսաց դիմավոր
բանակի հետ.

Առտարակեցին վանքում կազմակերպել էր
ուսա հիվանդ զինվորների խնամքը, որոնք
բավականին շատ էին՝ տեղի կլիմային ան-
սովոր լինելու պատճառով.

Պասկևիչը Երևանի պարսիական գործը
հանձնեց գեներալ Կրասովսկուն, իսկ ինքը,
հիմնական ուժերով, առաջ շարժվեց դեպի
նախիջևան և պաշարեց Արասաբազը. Երե-
վանի պաշարումը ձգձգվում էր, և ահա Կրա-
սովսկին, զինվորներին հիվանդանալուց դեռ
պահելու համար, զորքը տեղափոխում է
Բաշ-Աբարանի լեռները՝ թողնելով էջմիա-
ծնում իր հիվանդ զինվորներին, որոնք 1.000
հոգուց ավելի էին.

Պարսկական մի խոշոր բանակ, Աբրաս
Միրզայի գլխավորությամբ, օգտվելով այն
հանգամանքից, որ Պասկևիչը գլխավոր բա-

3. Հայկական ողորմութեան Աստուածազօր Մեծափա-
ռութեան Ինքնակալի և Կայսեր Ամենայն Ռուսաց Նի-
կողայոսի Առաջնոյ առ աղգս Հայոց որ ի Վրաստան,
1827 թ., Տփլիս, էջ 9 և 15:

4. Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-
ուսական հարաբերությունները, Երևան, 1947 թ.,
էջ 41:

5. Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի
«Տեղեկագիր», 1951 թ., № 11, էջ 11—30:

նակով գտնվում էր Նախիջևանի կողմերը, իսկ Կրասովսկին՝ Բաշ-Աբարանում, Արաքսի մյուս ափից անցնում է ռուսաց զորքի թիկունքը և օգտատուի կեսերին պաշարում էջմիածինը: Արթուր Միրզան մտադիր էր էջմիածինը գրավելուց հետո արշավել Թրքիսի: Շահզադեն սպառնում էր Ներսեսին՝ վանքը հիմնահատակ կործանել, եթե նա հո- ժարակամ չհանձնվի: Իսկ քաջարի եպիսկոպոսը պատասխանում է. «Վանքը հզոր է Աստուծոյ զօրութեամբ, ա՛ռ, եթէ կարող ես»:

շնորհակալություն է հայտնում Աշտարակեցուն և վանքի միաբանությանը, որոնք էջմիածնի պաշարման ժամանակ լույս պատկերում էին, մանաւանդ Ներսէս արհին, որ թօփի կրակ նա կու տար»:

Լսելով վանքի պաշարված և նեղ դրությունը, գննեռայ Կրասովսկին շտապում է շուտափույթ օգնության հասնել: Նա իր հաս- վեցնում է 2.500 զինվոր և շարժվում էջմիածին: Մեծ դժվարությամբ Կրասովսկուհ հաջողվում է ճեղքել պարսից օղակը և



Եւփանի բերդը

(Նկար Քելոյի, 1841 թ. նովեմբեր)

Գորդում էր ամբողջ Արարատյան դաշտը, ողջ գիշերը պարսիկները ուրակոծում էին վանքը: Թահասական էր պաշարվածների դրությունը, օգնությունը ուշանում էր, բայց էջմիածնում եղած փոքրաթիվ զորքերը Ներսես Աշտարակեցու ղեկավարությամբ հերոսաբար դիմադրում էին և պաշտպանում վանքը, ալնտեղ եղած ռազմամթերքը, սննդամթերքի պաշարներն ու հիվանդանոցը:

Մեզ է հասել մի հետաքրքիր վավերագիր — Ռբիխիից Սիմեոն եպիսկոպոս Բզնունու 1827 թվականի օգոստոսի 27-ին գրած նամակը Աշտարակեցուն, որի մեջ նամակի հեղինակը ռուսական նահանգապետի անունից

հասցնել օգնություն: Նրա բանակը առանձնապես մեծ կորուստ է ունենում էջմիածնի դաշտում: Դեպքերին ականատես Աշտարակեցին այսպես է նկարագրում պատերազմի այդ պահը. «...Ձի հետևազօրը ռուսաց ժամ 12 ճանապարհորդեալք ընդ անջուր անսպառ և յանդիման արեգակնակէզ օդոց վճարեալ զպատերազմն ութն ժամուց, ընդ ժամանելն ի ջուր այգեստանեայց Կաթողիկէլ էջմիածնի, զունդն առաջին անցեալ յապահովի գալը ժամանէր յԱթոռն, և զունդն վերջին ընդ նորին Գերազանցութեան քաջամարտ զններալ Աֆանասի Իւանիչ Կրասովսկույ

6. Ա. Գ. Երեցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կոփասի հայք, էջ 290:

7. Հայկական ՍՍԻ Կետական մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, Քղթողական X 57, վավերագիր X: 357:

կայեալ զառաջս թշնամեացն, զայր պատե-
րազմաւ. գունդն, որ ի միջի որպէս ի տեղի
ապահովի բացակայ առաջնոցն և ի վերո-
նոցն անկանի ի վերայ չըրոցն, գոյով յադ-
թահարեալ յուժգնութեանց ծառաւոյ, որ ի
վերայ հասեալ հեծելագորաց թշնամեաց
դարձեալաց մերձ առ նոսա, սրահար,
նիզակահար սպանանն զանկեալսն ի վերայ
չըրոց զհարիւրաւորս քանիս, զերեվարեն և
աւելի քան զերկերիւրս, մինչև ցժամանել առ
նոսա վերջին բանակին...⁸

Իսկ ի նշ էր տեղի ունենում այդ ժամանակ
վանքի պարիսպների ներսում, երբ դրսում
շարունակվում էր ոռոսաց զորարանակի մա-
հու և կենաց պայքարը։ Ամբողջ միաբանու-
թյունը, ներսեսի գլխավորութեամբ, զգես-
տավորված, Ս. Իշման սեղանի առաջ, սրբու-
թյունները ձեռքներին, աղերսում էին Բար-
ձրյալին՝ ոռոսաց զինքի հաղթութեան հա-
մար։ Ներսես Աշտարակեցին բարձրացել
էր Ս. Գեղարդը և արտասովոր շքերով հա-
ջողութուն էր մաղթում ոռոսաց զորքերին և
ինքն իսկ գրում է իր շրջաբերականի մեջ.
«Յուսացեալք յօգնականութիւն Տեառն Աս-
տուծոյ, միաբան առ հասարակ, փութացաք
ի սուրբ յեկեղեցին և մատուցեալ զչեմեռան-
դական աղօթս քաղում արտասուօք, խնդրե-
ցաք օգնականութիւն յերկնից»⁹։ Հայ ժողո-
վրդի մեծ հայրենասերը այդ վեհ բուպին
հիշեցնում էր մի ուրիշ ներսեսի, որը երբեմն
նպատ լեռան նվիրական յարձրութեաների
միտ աղթում էր հայոց քաջերի հաղթութեան
համար։

Երբ պատերազմը վերջացավ, կենդանի
մնացած զինվորները հասան վանք։ Դար-
բասները իսկույն բացվեցին, վանքում եղող-
ները խաչ ու խաչվառով զիմալորեցին իրենց
փրկիչներին։ Հուզված ելույթ ունեցավ Աշ-
տարակեցին. «Այս մի բուռն ոռոս եղբայրնե-
րը... ճեղքեցին, անցան երեսուն հազար ես-
տաղի զօրաց միջից։ Այս սակաւաթիւ գունդը
անմահ փառաց արժանացաւ և դեռեալ կրա-
սովակու անունը յափտենական անցնելի
կմնա էջմիածնի տարեգրութեանց մեջ»¹⁰։

Էջմիածնի համար մղված այս հերոսա-
մարտը փայտեր հրամանով անցավ ոռոսա-
կան զորքերի մեծ հաղթությունների շարքը և

կրասովակին էլ արժանացավ բարձր պար-
գեքի¹¹։

Պատկերվել ստանալով կրասովակու հետ
կատարված լիարդ զեպրերի լուրը, շտապեց
էջմիածնի նրան օգնելու, իսկ Արքայա Միր-
զան, լսելով Պատկերվելի զալը, իր զորքով նա-
հանջում է հույ, Ռուսական բանակն այժմ
նորից անդնում է հարձակման. սեպտեմբե-
րի 13-ին նրանք սրաշարում են Սարգարա-
յաղը։ Պաշարման մասնակցում էին նաև
հայ աշխարհագորակները։

Սակայն ոռոսական զորքերը հացի սա-
շարների խիստ կարիք էին զգում։ Աշտար-
կեցի նեղ դրությունից նորից Աշտարակեցին
է, որ փրկում է նա մի փոքր զնդով, իրեն
օգնական ունենալով կրասովակուն իր զո-
րագնդով, անցնում է կողքի կողմերը, մա-
րում է մեծ խանկութեամբ հացահատիկ և
հասցնում զորքին։

Սարգարաբազը պաշարող ոռոս զորքերը և
հայ կամավորական գունդը դիմում են վճռ-
ական գաղթողությունների։ Աշտարակեցին
ինքը մի կողմ դիմում է Սարգարաբազում
գտնվող հայ բնակիչներին և հորդորում նրանց
չհեղադարձել և... հաւաք զօրաց տիեզերա-
սասան կայսերութեան Ամենայն Ռուսաց... և
քաղաքապետութեան իրենց առաջ քերդիցն ելա-
նել յայտնի կամ անյայտ էջմիածնի, և թողույ
զհակահակութիւն և զպատերազմն անօգ-
տակար արեանց իրենանց և այլն¹²։ Կույր
ստորագրված է՝ «Արքեպիսկոպոս Հայոց
Վրաստանու Ներսէս, 1827, սեպտեմբերի 12,
ի գիւղն Քեալակարիս»։

Ամսի 18-ին, քսան ոռոսական հրանոթնե-
րի ուժակուծութեան և տեղի հայերի սպառ-
նալիքի տակ, բացվում են բերդի դռները։
Ժողովուրդը խալով ու խաչվառով զիմալու-
րում է ոռոսաց բանակին¹³։

Սարգարաբազի գրավումից հետո սկսվում
է նրեանի պաշարումը, որի գրավումը ձեռ-
նարկում է։

Ինչպես միշտ, այս անգամ ևս Պատկերվելն
օգնութեան է հասնում ներսես Աշտարակե-
ցին։ Նա կույր է ուղարկում էջմիածնի, Օշա-
կանի և Աշտարակի հայ գյուղացիներին՝ օգ-
նութեան հասնելու ոռոսական քաջարի զոր-
քերին։ Բերենք այդ կույրից մի օրինակ.

11. Հետագայում էջմիածնի օգոստոսի 17-ին բն-
կած զինվորների հիշատակին կանգնեցնում է մի կո-
թող-հուշարձան։

12. Պատմութեան կաթողիկոսաց էջմիածնի ի Մաե-
րայ մագիտորոսէ Մսերեանց, 1876 թ., Մտեկվա,
էջ 98—99։

13. Հայկական ՍՍՏՖ Պետական մատենադարան,
Արխիվային բաժին, Կաթողիկոսական գիվան, Քղզ-
թապանակ Ձ 57, վավերագիր Ձ 138։

8. Հայկական ՍՍՏՖ Պետական մատենադարան, Ար-
խիվային բաժին, Կաթողիկոսական գիվան, Քղզթա-
պանակ Ձ 58, վավերագիր Ձ 133։

9. Նույն տեղում։

10. Ա. Գ. Որդյան, Ամենայն Հայոց Կաթողիկո-
սությունը և Կովկասի հայր, էջ 294։

«Հասարակութեան հայոց Աշտարակցւոց և Օշականցւոց».

Գրեմ բազում օրհնութեամբ, զի ընդ ժամանել գրոյս իսկոյն առանց բռնապետ անցուցանելոյ թողեալ զամենայն զհարկաւոր գործրս ձեր պատկանեալս վասն տան և ընտանեաց ձերոց՝ ամենայն թուանք ունեցողքն և ի ձէնջ, և ի թուանք շունեցողացն ևս ոտհաւոր կտրիճ տղայք շատ հաւաքեալ հասուսջիք առ մեզ աստ՝ մինչև ցմտանել արեպա-

կան թնդանոթներ մինչև լույս ռմբակոծում էին քաղաքի կրկնակի հաստ ու բարձր պարիսպները:

Բերդի բնակչութիւնը այլևս չէր դիմանում, կանայք և երեխաներ լացով ու հոռաշանքով դիմում էին անգութ խանին, որպէսզի անձնատուր լինի: Խանը սպառնում էր նրանց:

Մագեց վերջապէս հոկտեմբերի 1-ի ավետարեք առավոտը, Հուսահատված ժողովուր-



Ռուսական զորքերի զօրահանգեւք Նրեանում 1827 թվականի հոկտեմբերի 1-ին

(Նկար Ռույսի)

կանն այսօր որ է շորեքշաբաթ և քսան և ութ սեպտեմբերի. և եթէ մինն ի ձէնջ ծուլասցէ և յամեացէ, իմասցի այնպիսին որ է թէ իմ աշաց լույս ևս լինիցի, ոչ խնայեցից հանել և բաց ընկենու:

Արեւելիսկոպոս Հայոց Ներսէս¹¹:

Ներսէս Աշտարակեցու կոչերը հոռի էին հանում հայ գյուղացիութեան և նրանք խրմբերով դիմում էին Նրեանի բերդը պաշարած ռուս և հայ զինորդին օգնութեան: Սեպտեմբերի 30-ի գիշերը 40 ռուսական պաշարողա-

ղը քարձրանալով պարիսպների վրա, թաշկինակներով նշան էին անում ռուսներին որ գան, բերդը անձնատուր է լինում. շատերը վտանգը հաշվի չառնելով վազում էին բերդի պատերից ներքև և շնչասպառ հասնում իրենց ազատարարներին: Բացվում են դարձափ դռները և ռուսական զվարդիական քաշարի գնդերը և հայ աշխարհազորական զորամասերը մտնում են քաղաք:

Հասան խանը, ուրիշ 7 խաների և 4,000 պարսիկ զինվորների հետ գերի են ընկնում: Ռուսները գրավում են 49 մեծ և 50 փոքր թնդանոթ, 4 դրոշակ և ուրիշ տաղմաավար¹²:

¹¹ Է. Հայկական ՍՍՏ Գիտութիւնների տկազեմիայի «Տեղեկագիր», 1951 թ., № 2, էջ 89:

¹⁴ Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Նրեան, 1947 թ., էջ 54:

Հայերը, ծեր թե մանուկ, վազում էին ընդառաջ իրենց փրկիչներին, լալիս ու փափում զինվորներին:

«Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուքը էլ չէին թողնում, որ մարդի բերանը բաց ըլի: Բայց ով սիրտ տներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը որ քարացել, սառել, երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու լեռների համարի համար»¹⁶:

«не бойтесь, не бойтесь» (Մի՛ վախենաք, մի՛ վախենաք). անգամ փորրիկ երեխաները, — պատմում է Լաչինովը. — իրենց մանկական կանչով թոթվում էին «Здравствуй! здравствуй!» (Բարև՛, բարև՛):

Ռուսական զորքերի մեջ կարգ պահպանել չէր լինում, ամեն ոք նետվում էր առաջ փրկելու տառապալներին: Ժողովուրդը ինքը ընդառաջ էր գնում իր ազատիչներին:

Երևանի գրավումից հետո, մյուս օրը, պարիսպի առաջ տեղի է ունենում զորահանդես: Աշտարակեցիներ, ռուսական հաղթական զորքերի առաջ գոհարանական մաղթանք է



Նփրեմ կարողիկոսը զինավորում է գեներալ Եսմոյովին

Ահանատեսներից մեկ ուրիշը՝ հայտնի գեկարրիստ Ե. Ե. Լաչինովը, իր «Խոստովանություններ» մեջ պատմում է հայերի ուսաներին հանդիպման սրտաշարժ եղելությունների մասին:

«Հայերը, — նկարագրում է Լաչինովը, — ծեր թե մանուկ, պարսիկների վախճանություններից սարսափած, խուճապահար փախչում էին գեպի ուսաց զորքը, աղաղակելով: «Русь! русь! здравствуй! здравствуй!» (Ռու՛ս, ու՛րա բարև՛, բարև՛), այս երկու բառով արտահայտելով իրենց սրտի սարսափը, սերն ու խնդրանքը, իսկ դրան ի պատասխան լսվում էր ուս զինվորների հուժկու ու փրկարար

կատարում: Մաղթանքից հետո ռուսական բոլոր հրանոթները միասին համազարկ են տալիս՝ ավետելով աշխարհին՝ հայոց ազատագրման նոր դարապոլիսը:

1827 թվականի հոկտեմբերի 3-ին, Ներսես Աշտարակեցին Սարդարապատի և Երևանի հաղթական զրավման առթիվ գրում է Նփրեմ կաթողիկոսին:

«Ողորմութիւն Աստուծոյ բարձրացաւ ի վերայ Հայաստան աշխարհի և Սրբոյ Տաճարի իւրում էջմիածնի և ամենայն որդւոց Սրբոյ Լուսաւորչին, որով և ի 19 սեպտեմբերի ընդ լուսածագն 20, առաւ Սարդարապազն, և ի 24 նորին պաշարեալ զԵրևան, ի

16. Խ. Արզուման, 3-րդ հատոր, Երևան, 1948 թ., էջ 170:

17. Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, 4-րդ հատոր, Երևան, 1951 թ., էջ 205—206:

1 հոկտեմբերի ընդ առաւօտն առաւ անառիկ կոշեցեայն Երևան, ի վերայ առաջնումն մեռեալ ոչ անելի քան 4 սալդատ և երկրորդին և ոչ մի վասն առմանն, զոր աւետարանեալ Զեզ, Սուրբ Աշոյ Զերում եմ և մնամ իսկական վերապատուութեամբ...

Զոր մոռացայ յիւրումն կարգի յաւելում աստէն, զի Հասան խան և Սվրհան Դուլի խան հանդերձ բազում խառնիւք սարպազաց և 2.500 զօրօք դան առ քեզ այդր ի Թիֆլիզ կականաւորեալ, յորժամ կարեն սաղմոսել րեքանք ձեր ամենեցում. Յամենայն նեղութեւ իմմէ փրկեցիք զիս և ի թշնամիսն իմ ետես ակն իմն¹⁰։

1827 թվականի դեկտեմբերի 6-ին ազատագրված Երևանում կազմվում է ժամանակավոր վարչություն, որի ղեկավար կազմի մեջ մտնում է նաև Ներսես Առտարակեցին։

Մեր հոգովածից դուրս է նկարագրել ռուսական բանակի հաղթանակները Մարանդում, զորքերի հաղթական մուտքը Թավրիզ և այլն, ընդհուպ մինչև Թյուրքմենչայի 1828 թվականի փետրվարի 10-ի (հին տոմարով) հայտնի հաշտութեան պայմանագիրը, մինչև պատերազմի ավարտը, հայերի զաղթը Պարսկաստանից և այլն, Միայն կասենք, որ ուրիշ ոչ մի դաշնադիր կամ պայմանագիր հայերի համար չունեն որ ակնհայտ և ու խոշոր նշանակությունը, ինչ Թյուրքմենչայի պայմանագիրն էր. այն եղավ մի դարձական հայերի համար։

Երևանի գրավումը համաժողովրդական ցնծություն և ուրախություն էր առաջ բերել ամենուրեք հայերի մեջ։ Հեռավոր Հնդկաստանից, Թյուրքիայից, Ռուսաստանից ու Պարսկաստանից շնորհավորանքի սրտառուչ նամակներ էր ստանում Հայոց ազատագրման գործին աջակցող սրբությունները և ինքնապատկան Ներսես Առտարակեցին։

Մեծ գոհունակություն է առաջ բերում նաև հայության լայն խավերի մեջ Թյուրքմենչայի պայմանագրի կնքման րարհաջող լուրը, ամենուրեք այդ առթիվ եկեղեցիներում մատթանքներ են կատարվում, ցնծության տոներ են տեղի ունենում և այլն։

10. Հայկական ՍՄՈՒ Պետական մասնադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 55, վավերագիր № 152։

Այսպիսով, Արեւելյան Հայաստանը ազատագրելու և Ռուսաստանին միացնելու դժվարին ու մեծ գործում իր խոշոր մասնակցությունն ու անդնահատելի աշխատանքն է կատարել հայ ժողովրդի շահերի լավագույն պաշտպան, եռանդուն հայրենասեր Ներսես Առտարակեցին։

Առտարակեցին փայլում է իր կազմակերպչական տաղանդով։ Ռուս-պարսկական պատերազմի ողջ ընթացքում չկա մի պահ, որ Առտարակեցին քաշված լիներ դրծից։ Լավ իշուր չէր, որ 1828 թվականի հունվարի 28-ին, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ աչքի ընկնող ծառայությունների համար նա պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով։ Այս շարժուն, տոկուն կամքով մարդը, ամենահուսահատական բույներին անդամ ընկճվել չդիտելու նա ամեն տեղ էր. մեկ տեսնում ենք նրան կամավորական զինքի կազմելիս, մեկ ռուսաց առաջապահ զորքն առաջնորդելիս, պաշար է հայթայթում ռուսաց բանակին, պաշտպանում է էջմիածնի վանքը, կոշեր է գրում և այլն։

Ներսես Առտարակեցին աննման հայրենասեր է, նրա հայրենասիրությունը այնպիսիներից չէ, որ մի վայրկյան առկայծում ես ու մարում, նա մինչև վերջն էլ մնաց բուռն ու կրակոտ հայրենասեր և պատահական չէր, որ ժողովուրդը նրան անվանում էր «ԱՄՇՏՊԱՆ ԼԱՅՐԵՆԵԱՅ»¹⁰։

125 տարի է անցել Արեւելյան Հայաստանի Ռուսաստանին միացնելու պատմական օրից։ Այսքան տարիներ հետո, երբ մենք այժմ, մեր յոթրում, թերթում ենք մեր անցյալի պատմության դժգույն էջերը, ապա մեր առջև խոյանում է իր կերպարի ողջ հույսկապություն մեր անվեհեր հայրենասեր Ներսես Առտարակեցին։

10. Ներսես Առտարակեցին թաղված է էջմիածնի Տոնարի զանգակատան հարավ-արևելյան կողմում։ Նրա մարմարյա տապանաքարի վրա արձանագրված է հետևյալը.

«Պաշտպան Հայրենաց

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ներսես Ե. Առտարակեցի,

Մենալ ի 13 փետրվարի 1761,

Վախճանեալ ի 13 փետրվարի 1827։





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆԵՐ՝

ՆՎԻՐՎԱԾ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՎԵԼՈՒ 125-ԱՄՅԱԿԻՆ

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Սույն թվականի մարտի 12-ին և 13-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտական սեսիան՝ նվիրված Հայաստանը Ռուսաստանին միացնելու 125-ամյակին։

Ներածական խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար Վ. Գուլբանյանը։ Նա նշեց Հայաստանի Ռուսաստանին միացվելու նշանավոր իրադարձության պատմական պրոգրեսիվ նշանակությունը՝ կանգ առնելով ուս ժողովրդի՝ հայ ժողովրդի ցույց տված եղբայրական անշահախնդիր օգնության փաստերի վրա։ Մեր սեփան, — ասաց նա, — հանդիսանում է երախտագիտական վառ զոհամուտների արտահայտություն՝ հանդեպ ուս ժողովրդի։

Սեսիայում դիտական զեկուցումով առաջինը հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Մ. Ներսիսյանը՝ «Հայաստանի միացումը Ռուսաստանին և դրա պատմական նշանակությունը» թեմայով։

Պրոֆ. Ներսիսյանը պատմական անվիճելի փաստերի հիման վրա ցույց տվեց պրոգրեսիվ այն մեծ նշանակությունը, որ ունեցավ Հայաստանի միացումը Ռուսաստանին։ Այդ միացումով հայ ժողովուրդը ազատվեց ֆեոդիկական բնաջնջումից, տնտեսական զարգացման լայն ուղու վրա կանգնեց՝ իր բախտը կապելով ուս մեծ ժողովրդի քախտի հետ, որի օգնությանն ենք պարտական մեր ներկա երջանիկ իրականության համար։

«Անգլիայի և Ֆրանսիայի պայման ընդդեմ Հայաստանի միացմանը Ռուսաստանին» թեմայով զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Հովհաննիսյանը։ Զեկուցողը պատմական փաստեր բերեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանների րացասական դիրքի վերաբերյալ՝ Հայաստանը պարսկա-թյուրքական լծից ազատելու գործում։

Սեսիայի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին պատմական գիտությունների թեկնածու Վ. Ռահմանյանի զեկուցումը «Անգլիկոպկասի ժողովուրդների ուսակայն օրինեաացիայի պատմությամբ շուրք» թեմայով։ Զեկուցողը քաղմաթիվ փաստերի հիման վրա ցույց տվեց անգլիկոպկասի ժողովուրդների տնտեսական և քաղաքական վաղեմի կապերը մեծ Ռուսիայի հետ։ Նա բերեց ուշադրավ փաստեր այն մասին, որ Անգլիկոպկասի ժողովուրդները շատ վաղուց ունեցել են ուսական օրինեաացիա, ձգտել են դեպի Ռուսաստան և նրանից օգնություն ակնկալել՝ ազատագրվելու պարսկա-թյուրքական լծից։ «Հետագայում, 18-րդ դարի առաջին քառորդում, — ասաց զեկուցողը, — կատարվեց այդ ժողովուրդների երազանքը — իրենց ձգած ազատագրական պայքարի և ուս ժողովրդի օգնության շնորհիվ անգլիկոպկասյան ժողովուրդները ազատվեցին պարսկա-թյուրքական լծից և միացան Ռուսաստանին։ Հայերի, ինչպես նաև վրացիների և ադրբեջանցիների Ռուսաստանին միանալը նախապատրաստվել է այդ ժողովուրդների ղեպի Ռուսաստանը ու-

նեցած վաղեմի ձգտման, ուսական օրինակների և տնտեսական ու կուլտուրական սերտ հարաբերության հետևանքով:

Հաջորդ՝ մարտի 13-ի նիստում, առաջինը լավեց տնտեսական գիտությունների թեկնածու Ս. Զուրաբյանի զեկուցումը՝ «Հայաստանի էկոնոմիկայի զարգացումը երա՝ Ռուսաստանին միանալուց նետո (19-րդ դարում)» թեմայով: Զեկուցողը ցույց տվեց, որ Հայաստանի էկոնոմիկան պարսկա-թյուրքական բնակավայրի տարիներին ծայր աստիճան քայքայվել էր: Հայաստանը միանալով Ռուսաստանին, մտավ տնտեսական անհամեմատ լավելի զարգացած մի երկրի կազմի մեջ, քան այդ սուլթանական թյուրքիան և շահական Պարսկաստանն էին:

«Ռուս առաջավոր կուլտուրայի բարերա՝ ազդեցությունը հայ գրականության և արվեստի վրա» թեմայով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Հովնանյանը:

Հաջորդ զեկուցումը՝ «Ռուսական գիտու-

րյան դերը Հայկական ՍՍՌ-ում վարենարկական գիտությունների զարգացման գործում» թեմայով կարգաց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Շահինյանը:

Մարտի 13-ի երեկոյան նիստում սեփայլի մասնակիցները առաջինը լսեցին պատմական գիտությունների թեկնածու Գ. Ղարիբջանյանի «Հնդկամերեյան Մեծ ուղյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը» արժեքավոր զեկուցումը:

Սեփայլի մասնակիցները հատկապես մեծ հետաքրքրությամբ լսեցին պատմական գիտությունների թեկնածու Ա. Հակոբյանի զեկուցումը՝ «Ռուս մեծ ժողովրդի օգնությունը Սովետական Հայաստանին՝ սոցիալիստական շինարարության բնագավառում» թեմայով:

Սեփայլի վերջում լավեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Ղազանջյանի զեկուցումը՝ «Ռուս մեծ ժողովուրդը ՍՍՌ-ում ժողովուրդների կենդանի» Ստալինյան բարեկամությունը ցնամեկուղ ումն է» թեմայով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Մարտի 20-ին և 21-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Միեմիստների, Սովետին վից Պետական ձեռագրատան (Մատենադարանի) գիտական 6-րդ սեսիան՝ նվիրված Հայաստանը Ռուսաստանին միացվելու 125-ամյակին:

Սեսիան բացեց Մատենադարանի դիրեկտոր Վ. Նալբանդյանը: Նա իր բացման խոսքում նշեց, որ Մատենադարանի ներկա սեսիան, որը նվիրված է հայ ժողովրդի ազատագրմանը պարսկա-թյուրքական դաժան տիրապետությունից, «Հայ ժողովրդի երախտագիտության վառ արտահայտություններից մեկն է հանդես փրկարար ուս մեծ և ազնիվ ժողովրդի»:

Անուհետև նա շեշտեց Հայաստանի Ռուսաստանին միացման առաջադիմական մեծ նշանակությունը: «Այդ միացումով, — ասաց նա, — հայ ժողովուրդը փրկվեց պարսկա-թյուրքական ասիմիլատորների կազմակերպված մշտական ջարդերից ու կոտորածներից, ֆիզիկական բնաշնչման ահռելի վտանգից և կանգնեց քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման նախընթացը շունեցող առաջադիմության ուղու վրա, դրանով իսկ դուրս գալով դարեր շարունակ գոյություն ունեցող տնտեսական ճահճացման, հարստահարման ծանր վիճակից»:

Խոսելով ուս ժողովրդի Հայաստանին ցույց տված օգնության վրա նոր ժամանակներում, նա առանձնապես կանգ առավ ուս ժողովրդի անշահախնդիր և ամենօրյա օգնության փաստերի վրա՝ Սովետական իշխանության տարիներին: Այդ օգնության շնորհիվ անցյալի ավերակների վրա բարձրացավ նոր, ծաղկող Հայաստանը, որը դարձավ ինդուստրիալ և առաջավոր գյուղատնտեսական մի երկիր՝ ուրախությամբ լցնելով բոլոր անկեղծ հայրենասերների արտերը:

Հայաստանի միացումը Ռուսաստանին և երա պառնակվեց նշանակությունը թեմայով զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Պ. Սեյրանյանը: Զեկուցողը մանրամասն խոսեց Ռուսաստանի գործուն օգնության մասին, որ ունեցավ նա Հայաստանի համար՝ միացումից հետո: Զեկուցողը հատկապես նշեց ուս ժողովրդի առաջավոր դեմոկրատական կուլտուրայի և հասարակական մտքի դրական ազդեցությունը հայ հասարակական մտքի և կուլտուրայի վրա:

Սեփայլի մասնակիցները մեծ ուշադրությամբ լսեցին վրացական ՍՍՌ պետական թանգարանի ձեռագրական բաժնի վարիչ պրոֆ. Ի. Աբուլաձեի «Նոր գրական նուարձաններ վրաց և հայոց հարաբերությունների մասին անցյալում» հետաքրքիր զեկուցումը, որը կարգաց հայերեն: Պրոֆ. Աբուլաձեն նշեց, որ հայ և վրացի ժողովուրդները, սկսած հեռավոր անցյալից, ստեղծագործա-

կան սերտ փոխհարաբերությունների մեջ են գտնվել: Հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն են թարգմանվել բազմաթիվ երկեր: Նա հատկապես կանգ առավ 17-րդ դարում վրացերենից հայերեն թարգմանված աստղաքաշխատան և բժշկական երկու աշխատությունների վրա:

Սեփալի մասնակիցները հետաքրքրություն ցուցին պրոֆ. Ա. Արաբաբյանի ղեկուցումը՝ «Հայ ժողովրդի ծանր դրությունը պարսկա-թուրքական արյունոտ լծի տակ» թեմայով: Սկզբնաղբյուրներից մեջ բերած փաստերի հիման վրա ղեկուցողը եզրակացրեց, որ «Հայ ժողովրդի» անցյալի վշտերի և դառնությունների ողջ պատմության մեջ՝ ամենից ծանրը, ամենից ողբերգականը եղել է պարսկա-թյուրքական տիրապետության արյունոտ ժամանակաշրջանը... Այս ժամանակաշրջանում կանգ է առել նրա արտադրական ուժերի զարգացումը և հայ ժողովուրդը գտնվել է քաջահայտ ֆիզիկական ևնաշնչման վտանգի առաջ:

Պրոֆ. Ա. Արաբաբյանը, նորահայտ փաստաթղթերի հիման վրա ցույց տվեց նաև՝ թե ինչպիսի՞ շեղումներ է ընդունվել Հայաստանի միացումը Ռուսաստանին իր ժամանակի հայկական հասարակայնության տարբեր խավերի առաջավոր ներկայացուցիչների կողմից:

«Ռուս և անգլիականաց ժողովուրդների բարեկամության արտացոլումը 1795—1828 թվականների հայ գրականության մեջ» թեմայով զեկուցեց Մատենադարանի աշխատակից Աս. Մնացականյանը: Նա հետաքրքիր մեջբերումներ արեց իր ժամանակի չափածո հայ գրականությունից՝ ցույց տալով առաջավոր հայ մտավորականների ամուլությունը պարսիկ և թյուրք հարստահարիչների նկատմամբ, և, հակառակը, նրանց դավաստով խոսելը ռուս ժողովրդի մասին:

Պրոֆ. Գ. Ուսուկի ղեկուցումը՝ «Սարգս Օրբելիանի հայ վրացի լավագույն մտածող և պետական գործիչ Սուլխան Սաքա Օրբելիանի կազմած բառարանի հայկական աղբյուր-

րին. Պրոֆ. Գ. Սևակին հաղորդել է ընդօրինակող գրիչների կողմից խաթարված հարյուրավոր բառեր վերծանել և վերականգնել նախնական բնագիրը:

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսեանյանի ղեկուցման թեման էր «Հայ ժողովրդի պատմական բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ», Ջեկուցողը բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց տվեց, որ հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը շատ հին է — դեռևս կիկլադյան Ռուսիայի ժամանակ հայերը անտիվ փոխհարաբերությունների մեջ են գտնվել ռուս ժողովրդի հետ: Այդ բարեկամությունը սակայն նոր որակ, նոր փայլ ստացավ Սովետական իշխանության գոյության, երբ այդ ժողովուրդները, ինչպես և Սովետական Միության ընդհանուր ժողովուրդները, մի համերաշխ ընտանիքի մեջ կերտում են իրենց չքնաղ ապագան:

Մատենադարանի գիտական բարոյաբան Ե. Նազարյանի ղեկուցումը վերաբերում էր հայ մեծ լուսավորիչ և. Արամյանի ուսուցիչ Զ. Ալամդարյանի նոր հայտնաբերված «Տեսությանը գործնական վարժից բարձրագույնագույն» արժեքավոր աշխատությանը: Հայտնաբերված այդ տեքստը մեծ արժեք ունի գիտության պատմության համար, որովհետև այդ աշխատությունից երևում է Ալամդարյանի առաջավոր մտածողի կերպարը, նրա բարձր գնահատությունը ռուս ժողովրդի գիտության, դրականության և արվեստի նկատմամբ:

Սեփալում լսվեց նաև Մատենադարանի աշխատակից Ա. Աղամյանի հաղորդումը Մատենադարանի նորահայտ երկու վավերագրերի մասին, որոնք պատմական արժեքավոր նյութեր են պարունակում հայ աշխատավորության մասնակցության մասին պարսկա-թյուրքական բռնակալությունից ազատագրվելու ժամանակաշրջանում:

Սեփալ բարձր գնահատականի արժանացավ ունկնդիր հասարակության՝ մայրաքաղաքի գիտության, կուլտուրայի, արվեստի աշխատողների և ուսանողության կողմից:

Սեփալում կարդացված նյութերը կտպարվեն առանձին ժողովածուով:





ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ



Ապրիլի 5-ն էր, Ճիշտ կեսօր, Ամեն սեռի, ամեն հասակի ու ասպարեզի պատկանող մարդկանցից բաղկացած մի ընտրյալ բազմություն, խորհրդավոր լուսթյամբ ու լրջությամբ, օպասում էր բարձրագիժ աստիճանների վրա մի նորակառույց ու նրբակերտ շենքի, որը կառուցել է Հայաստանի կառավարությունը՝ հավերժացնելու համար հայ ժողովրդի մեծ ու սիրելի բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հիշատակը։

Հայկական ճարտարապետության գեղեցիկ նմուշներից մեկն եղող այդ կառույցը, որպես փառապսակ կանգնած Հենինի լայնարձակ պողոտայի հյուսիսային մեկնակետի բարձունքի վրա, կոչվում է «Հովհաննես Թումանյանի տուն-բանգարանը»։ Նրա կամարակապ ճակատը, բարձրից, հսկում է մայրաքաղաքի մագիստրալներից Հենինի պողոտայի վրա, որի երկու կողմերում շարված ակասիաները հայկական հինավուրց մանյակների մարգարիտներն են հիշեցնում, պողոտայի մինչև Սարիթաղ հասնող անծայրածիր երկարությամբ։ Գրանիտե սրբատաշ քարերից կառուցված լայնանիստ սանդուղքի հիստունըրս աստիճանները, — բանաստեղծի հիստունըրս տարի է ապրել (1869—1923 թ. թ.), — տանում են դեպի վեր, դպի տուն-թանգարանի նախամուտ դահլիճը։

Այդ սանդուղքի վրա կատարվում էր մի խորհրդավոր արարողություն՝ Հովհաննես

Թումանյանի անվան տուն-թանգարանի բացման արարողությունը։

Աստիճանների վրա կանգնել էին գիտության, գրականության, գեղարվեստի, ճարտարապետության, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսուցչության և ուսանողության ներկայացուցիչները, ինչպես նաև մեծ քանաստեղծի նկատմամբ անհուն սիրով տոգորված ժողովուրդը։ Այնտեղ էին դանդաղ նաև անմահ բանաստեղծի կողակիցը՝ Օլգա Թումանյանը և գրականագետ դուստրը՝ Նվարդ Թումանյանը, որոնց դեմքերի վրա, իրենց հարազատի մահից ծընված տրտմության աղբյուրներ, ճառագայթում էր նրա անմահացումից բխող երջանկությունը։

Հանդիսության բացման խոսքն ասաց Հայաստանի կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեի նախագահ Հովհաննես Բաղդասարյանը։ Հետո, հուշիլ լառերով, բանաստեղծի թանկագին հիշատակը ողբկոչեցին ու պանծացրին գրականագետ Ստեփան Զորյանն ու հայտնի ժողովրդական տառգիչ Սիմակ Սահակյանը։

Հավարտ բանախոսությունների, որոնք հանդիսության արժանի պատկանանքով ունկընդրվեցին հանդիսականների կողմից, թանգարանի մուտքը փակող ժապավենը կտրեց Հայաստանի Սովետական գրողների միության նախագահ, մեծանուն բանաստեղծ Ալիստիք Իսահակյանը՝ ժամանակակից հայ գրականության սիրելի Վարպետը։

ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻՑ ՆԵՐՈՒ


Նախասրահ մտնող այցելուների ուշադրությունը գրավում է դահլիճի խորքում, երկու մշտադալար հովանոցատեղեր արմավենիների միջև հանգչող, հանճարեղ բանաստեղծի բրոնզե կիսանդրին, որի վերևում, պատի

վրա, ոսկեգույն տառերով գրված է. «Գրողը մարդկային ողբու ճարտարապետն է» (Ստային)։

Մանուշակագույն թավիշն վարագույրենյոր իրենց երկարածիգ ու ծավալուն շքեղու-

թյան ետև պահում են Թումանյան քննադատի բնակարան-տունը, մինչդեռ աջակցում, գործապատ մի սանդուղք այցելուններին տանում է երկրորդ հարկը՝ իսկական թանգարանը:

Քարյան), Թումանյան գլուխի ընդհանուր տեսարանը» (Ա. Պարոնյան), «Զադի ձոր» (Շահվերդյան) և վերջապես բանաստեղծի յուրաներկ մեծադիր նկարը, որը ժպտում է ու կարծես դիտողին էլքում տալիս կարգա-



Հովհաննես Թումանյան

Արդեն այս սանդուղքի վրայից այցելուն Պարաբերության մեջ է մտնում անմահ՝ բանաստեղծի մեծ հոգու հետ, դիտելով նրա ծննդավայր Լոռվա տեսարանները ներկայացնող նկարները՝ «Լոռուց տեսարան» (Թայրուրդյան), «Ս. Գրիգորի տղայություն» (Ա. Ռե-

դմացի շրջանակի մեջ արձանագրված հետևյալ քառյակը և ուշի-ուշով խորհրդածել:

Էրո՞ծն է անմահ, յա՛վ իմացեմ,
Որ խոսվում է դարեդար,
Երե՛ն է երան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադուր:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ

Այս սենյակի կենտրոնում, ապակե պահարանի մեջ զետեղված հիանալի մակետի առջև այցելուի միտքը սլանում է դեպի Դսեղ, դեպի գյուղական այն տունը, որի մեջ 1869 թվականին ծնվել է Հովհաննես Թումանյանը։ Այցելուն գտնվում է մեծ բանաստեղծի մանկությունը (1869—1879 թ. թ.) վերհիշեցնող հազվագյուտ կենդանագիրների հորը՝ տեր Թադեոսի (աշխարհական անունով՝ Ասլան), մորը՝ Սոնայի, հորեղբորը և առաջին ուսուցչին՝ Գրիգոր Բիծայի լուսանկարների առաջ։ Հետո այցելուի ակնարկը սահում, իջնում է ապակեփակ փաստաթղթերի վրա, որոնք ներկայացնում են Օվակիմ յուզբաշու (Հովհաննես Թումանյանի պապի հոր) պատվոգրեր, ուսաց երկրի սահմանները՝ արիաքար պաշտպանելու համար (1811 թ.), Հովհաննես Թումանյանի պապի՝ Օհաննեսի պրապորշիկի (ենթասպայի) կույման վկայականը, ստացած ուս-թյուրքական պատերազմի ժամանակ Ափայցխայի մարտերում կատարած սխրագործությունների համար, բանաստեղծի հոր՝ Ասլան Թումանյանի ծննդյան վկայականը և, վերջապես, նույն ինքն բանաստեղծի ծննդյան վկայականը։

Այս մասնաբաժնում ցուցադրվել են նաև Հովհաննես Թումանյանի պատանեկության (1879—1883 թ. թ.), ներսիսյան դպրոցի աշակերտության (1883—1886 թ. թ.) և գրական գործունեության առաջին տարիների

(1890—1892 թ. թ.) վերաբերյալ թանկարժեք հիշատակները՝ ներսիսյան դպրոցի 4-րդ դասարանի դասացուցակը նույնիսկ աշակերտ Թումանյանի ձեռագրով, նրա առաջին բանաստեղծությունների (Շոգուն հատոր, ռճայ վաճառական, Ժնյո, տխուր ես, Դուքանի երգ) ձեռագրերը, նրա դասընկերների և ուսուցիչների լուսանկարները, ինչպես նաև լուսանկարները 1890-ական թվականների հայ գրականության վեռելանների՝ Ղազարոս Աղայանի, Գարգիել Սունդուկյանի, Պերճ Պողոսյանի, Ալեքսանդր Երվանդյանի, Ղոկոս Հովսեփ Երջմանյանի (Մերենց), որը հղել է մեծ բանաստեղծի պատմության և ֆրանսերեն լեզվի դասատուն, և ուրիշների։ Արտեղ ցուցադրված են Կոնյուլից, Լեմոնտովից և Լյուի Թայրենց Թումանյանի կատարած հայերեն թարգմանությունները։

Հիսյի ժողովուրդը, ղեպի բնութագրեր, ճայոց գրավներ, — պատգամում է անմահ բանաստեղծի մի ձեռագիրը, վկայելով այն, թե ժողովուրդն ու բնությունը անսպառ ու անապական աղբյուրներն են ներշնչանքի, լիարժեք ու անմահական ստեղծագործությունների։ Ու հիացական ակնարկով դուրս եկող հետո Վերուն խաչի և ՎՍ. Դրիպորի աղբյուրի մոտ, տրամանուշ Ժպիտը շրթներին, Լուվա սքանչելի բնության առջև խորը ներհայեցող բանաստեղծին, այցելուն մտնում է հաջորդ սենյակը։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ

Հայ ժողովրդի սիրելի բանաստեղծ Հովհաննես Թումանյանի գրական-հասարակական կյանքի ամենաբեղուն շրջանի (1901—1923 թ. թ.) սքանչելի պատկերացումն է թանգարանի այս մասնաբաժնում։ Այստեղ ապակեփակների մեջ ցուցադրվել են անգույնական Վենուշի, Վաստենցի Դավիթ էպոսի և Վերա Նազարի առաջին տպագրությունները, Գյոթեի (Վերադ), Հայրիխ Հայնեի (Շեքսպիր, հեռու կնոջնեմ), Լոնկ-Ֆելլոյի (Վաստենց) բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները և Պուշկինի մարգարեաշունչ հետևյալ քառյակը։

«Առում եմ քեզ և քո գանձ
Միտնեմք, գոռոց ցուր,
Եվ քո ուրախ ու քո մաճը
Պիտի տեսնեմ անպատճառ»։

Այս մասնաբաժնում ցուցադրված լուսանկարները՝ Սայաթ-Նուվայի մահաբանը Թեոդոր Ս. Գեորգ Եկեղեցու բակում, Խա-

չատուր Աբովյանը, Թեոդոր Մեդեյի բանտը, ուր բանաստեղծը գրել է Վայրենք բանաստեղծությունը, Միքայել Նալբանդյանը, Հովհաննես Թումանյանը էջմիածնի որսերի հետ (1915 թ.), Վերնատան անդամների՝ Հովհաննես Թումանյանի, Ավետիս Իսահակյանի, Գերենիկ Գեմիլյանի, ինչպես նաև Ղազարոս Աղայանի, Վրթանես Փափաղյանի և Կոմիտասի հետ մեծ բանաստեղծի խմբանկարները — հայոց պատմության արժեքավոր դրվագները վերապրեցնող կենդանագրեր են։ Բայց ժողովրդի անմահ երգչի հոգու մեծությունը, նրա ղեպի մարդն ունեցած խանդավառանքը (ինչ ազգության էլ պատկանելիս լինի նա), նրա հաշտասիրությունն ու խաղաղասիրությունը պայծառորեն երևում են 1905—1920 թվականներին վերաբերող մի շարք նյութերի ցուցադրության մեջ։

Մի ամբողջ պատմություն են պարփակում այն երկու նամակները, որոնք փոխանակվել

են հայ մեծանուն երկու բանաստեղծների՝ Ավետիք Իսահակյանի և Հովհաննես Թումանյանի միջև, 1921 թվականին:

Իսահակյանը գրում է.

«Ես ինքս ազգային բացարձակ անկախության ոչ կուսակից էի, ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը. նվթարապես ոչ միայն չի տղնի մեզ, այլև թշնամի է և

Թումանյանը պատասխանում է.

«Ավո ջան.

Ստացել եմ նամակդ: Ասում ես՝ հթե հարմար ժամանակ է՝ կանչի՛ր, ես կգամ:

Հարմար ժամանակը ես չգիտեմ դու որ ժամանակի ես ասում, բայց ասում եմ.

— Արի՛:

Արի՛, Ավո ջան»:

Նվ. Վերու-Լալա-Մահարիսի դեմա ալն



Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի բացումը

հրճվում է հայկական քնաշնչումով. սրան համոզված եմ փաստերի վրա. ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դժանդակներ, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են նվթարապես աչքում. պետք է երես դարձնել այս ավազակներից և մոտենալ Ռուսաստանին:

Ժամանակ պանդոպոս հեղինակը վերադարձավ Հայրենիք: Հայրենասեր բանաստեղծն այժմ վախելում է ոչ միայն հայ ժողովրդի, այլև Սովետական Միության բաղմազգ ժողովուրդների անխառն հարգանքը, միևնույն ժամանակի շատ գրողներ արտասահմանում, օտար հողերի վրա, դատապարտված են ընդմիշտ կորչելու:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ

Հուլիսին քով ու հիացմունքով նայելուց հետո այն ապակեպահարանը, որի մեջ գետեղվել են բանաստեղծի հիանաժալի (1919 թ.) առթիվ ստացած նվերները՝ արծաթե ու հախճապակե ծաղկամանները, ռակեջրած գրիչը, որը նվիրել են Թբիլիսիի աշակերտները, այցելուին մտնում է երրորդ սենյակը՝ բանաստեղծի գրադարանը։ Մի շնորհալի աղջիկ

բացատրում է, որ այս փակ պահարաններում պահպանվում են համաշխարհային գրականության պատկանող վեց հազար հատընտիր գրքեր։ Անկյունում, մի հատուկ ապակե պահարանի մեջ գտնվում են բանաստեղծի հանդերձները՝ սև հագուստը, մետաքսահյուս քանկոնակը, գիշերառնոց վերարկուն, կոշիկները, երկայն գավազանը։

ՎԵՐՆԱՏՈՒՆԸ

Թանկագին հիշատակների ինչ հարուստ գանձարան է ժողովրդական և ժողովրդականի բանաստեղծի աշխատասենյակը, որը կահավորվել է ճիշտ այնպես, ինչպիսին է եղել Թբիլիսիի Վերնատունը։ Այստեղ է գրասեղանը, որի վրա բանաստեղծը գրել է իր մնայուն երկերից շատերը։ Այստեղ են բազմոցն ու բարձերը, որոնց վրա ընկողմանել է նա գրական երկունքից առաջ կամ հետո։ Վերջապես, այստեղ են նրան սիրելի բոլոր առարկաները՝ թանաքամանը, գրիչը, գեղարվեստական արձանիկները, պատի նախշուն գարդերը, նկարները և այն պահա-

րանը, որի մեջ նա պահում էր բազմաթիվ ժողովուրդների ֆուլկլորային գրականություններ։ Այցելուի հոգին անօրինակ հուլիսին քով է համակվում այս աշխատասենյակի մեջ, խորհելով, որ նա եղել է այն խորհրդավոր Վերնատունը, որտեղ հավաքվել, խոսակցել, հայ գրականությունը քարոզացնելու, ազնվացնելու, հարստացնելու հարցի շուրջ խորհրդակցել են Ղազարոս Աղայանի, Գարիկի Սունդուկյանի, Պերճ Պոռչյանի, Ավետիք Խահակյանի և Դերենիկ Դեմիրճյանի նման մեծանուն գրողներ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՂԻՃԸ

Թանգարանի կենտրոնական ամենաընդարձակ դահլիճը հատկացվել է չորս բաժինների։ ա) Թումանյանը և ռուս գրականությունը, բ) Թումանյանը և ժողովուրդների բարեկամությունը, գ) Թումանյանը երաժշտության մեջ և դ) Թումանյանը սովետական շրջանում։ Եվ այդ յուրաքանչյուր բաժնի մեջ, այցելուները զմայլանքով հաստատում են շնորհակալ այն աշխատանքը, որը կատարել է ժողովրդական մեծ բանաստեղծը։ Այդ աշխատանքի ապրող փաստերն են նրա 160

անուն գրքերը, որոնց հրատարակվել են բացի հայերենից, ռուսերեն, ուկրաիներեն, վրացերեն, ադրբեյջաներեն և այլ լեզուներով։ Մի անկյունում, ապակյա պահոցի մեջ, նվիրական մասունքների նման պահվել են նրա կիսալուսնաձև ակնոցները, թելի թափը, ջրի բաժակը, արծաթե զոլալը և այլն, իսկ փառվանաձև սյունատախտակների վրա այցելուին կարդում է սիրելի բանաստեղծի մահվան տարեդարձի առթիվ Հայաստանյան մամուլի հրատարակած հոդվածները։

ՎԵՐՋԻՆ ԱԿՆԱՐԿ

Կենտրոնական դահլիճից դուրս գալուց առաջ, այցելուի վերջին ակնարկը կենտրոնում է այն մեծադիր յուղաներկի վրա, որը ներկայացնում է բանաստեղծին՝ ժողովրդի հետ միասին հայ գույանի սազերգություն

ունենալով։ Եվ այցելուին ինքն էլ տարվում է մտովի երգելու գույան Զաքարյանի հետ։

«Շատ դառն կապրես
Անմեռ հավիտյան,
Երգի մեծ վարպետ
Անմահ Թումանյան»։





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

Գ. 2. ՌԱԶԳՐԱՏԼՅԱՆ

Բ Ո Ւ Լ Ղ Ն Ր Ն Հ Ն Յ Ն Ր Ը

Ա



աշաւերված ճէշմիածինն պաշտոնաթերթի տված նյութերու ճոխ ու բովանդակալից ուսումնասիրական նկարագրութիւններեն, ինչպես նաև հաջ պատմական արժեքներու մասին իր գնահատելի ջանասիրութենեն, ներկայիս կուգամ հակիրճ և ամփոփ կերպով տալու մեր գաղութին անցյալի և ներկայի պատմութիւնը, հուսալով, որ այդպիսով փոքր ծառայութիւն մը մատուցած կըլլամ հայ պատմութեան և մշակութիւն:

Կարծիքներ կան, որ մենք Անիի, Նախիջևանի ազգաբնակչության շառավիղներեն ենք, որոնք եկած ու հաստատված են Բալկաններու այս կողմերը, թեև պատմական աղբյուրները ցույց կու տան, որ աղկե շատ տարիներ առաջ ալ այս կողմերը կապրին եղեր հայեր: Այսպես, մենք կտեսնենք Բուլղարիո մայրաքաղաքին՝ Վելիկո Տորնովոյի մեջ եղած կիսափոլ եկեղեցիի մը մնացորդները և գերեզմանաքարերը, որոնք ոչ մի հիշատակութիւն թեև չեն պարունակեր, սակայն հաստատապես գիտենք, որ սույն եկեղեցիվոյն անոթներն ու զգեստները բերված են ժամանակին Կուարովգրադի (Շումեն) ու փոխադրված հայոց Ս. Աստվածածին եկեղեցիվոյն մեջ: Այսպես է պարագան նաև Թազգրադի և Բրովադի քաղաքներուն, ուր բազմաթիվ հայեր ապրած են, իսկ անդին, Սև ծովու եզրերին, Բուրգազ քաղաքին շրջակայքը հայ իշխանապետութիւն մը գոյութիւն ունեցած է: Ասկէ առաջ, երբ Պրեսլավի մոտ պեղումներ են կատարված, երե-

վան եկած է ցար Սիմեոնի եկեղեցի-դամբարանը և անոր քովիկը գտնված խաչքար մը՝ հայերեն մակագրութեամբ: Հայտնի է, որ 8-րդ դարուն հազարավոր հայ պալիդիկյաններ տեղահանված են Բյուզանդիո Կոստանդին կայսեր կողմէ դեպի Թրակիա և 9-րդ դարուն հայ շրջաններուն վրա ղրկված պատվիրակ՝ բյուզանդացի Պետր Սիկուշ, 868-ին, այնտեղի պալիդիկյաններեն կիմանա, որ կմտադրեն անցնիլ Բուլղարիա:

Յար Սիմեոնի գրավումներեն հետո, ան Պլովդիվի նահանգը կմիացնէ ու կկցէ Բուլղարիո, կթուլլատրն պալիդիկյան ուսուցիչներուն մուտքը և մեծ դյուրութիւններ կընծայէ անոնց Մակեդոնիո և Բուլղարիո մեջ: Ինչպես կըսեն պրոֆ. Գաջարով, դոկտ. Բ. Գրան և պատմաբան Շիշկով, բուլղարները լուրացան իրենց հարմարեցնելու պալիդիկյանութիւնը՝ ընդունելով դայն օրինակելի: Բուլղարիո մեջ հայերը ցանցին սերմը, ուրկն ծագում առավ բոլոմիլութիւնը: Ըստ Շիշկովի գրածին, Պլովդիվին 25 կիլոմետր հեռու գտնվող Բաշկովոյի վանքը շինված է 18-րդ դարի լեռան կողքին 1083—1084 թվականներուն Գրիգոր Բակուրյանի կողմէ: Անոր մասին կըսեն, թե ծագումով վրացահայ մըն է՝ ականավոր հայ ընտանիքի սերած: Այսպես է պարագան պալիդիկյաններուն, որոնք հայ ծագում ունին, և որոնք 8-րդ և 9-րդ դարերուն եկած և հաստատված են այս կողմերը, մեծ մասամբ Պլովդիվի շրջակայքը: Իր շատ մը պալիդիկյան դուռներ կան: Պատմականորեն ընդունված է, որ անոնք կրօնական հալածանքի երթարկված ու փախուստ տված են դեպի բալկանները:

Ռուսընկի (Ռուսն) հայոց եկեղեցվույն մեջ գտնված արձանագրութենեն ալ կերեկի, ինչպէս ալդ հիշատակութիւնը կրնէ տեղ-վույն հանգուցլալ ավագ քահանա Բոյաջլա-նը, որ կրսն.

«Են որ ասնն զգաղթականութենէն յամի Տեառն 1500. ահագին շոինդն ալրեցաւոր պատերազմաց, յորժամ յանհնարին տազ-նապս հասուցեալ զՀայաստան աշխարհ և բնակիչն յահէ թշնամեաց պակուցեալ ցան ու ցիր լինին ընդ երեսս երկրի, ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մասն մի ի նոցանէ աստաղդական և թափառաշրջիկ յածնալ գան ի կողմառնս յայսուիկ դարեալ դադարեալ աստանօր բնակութիւն հաս-տատմն, յորս հաւասարապանծ հնութեամբ և ազնուականութեամբ փայլէին երկոքին տարժմբ «Անուշեանք» և «Աւէտք»:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յաղագս առաջին շինութեան սրբոյ եկե-ղեցւոյս և հայոց գալստեան ալսր ի Ռուստուք:

Այս սուրբ եկեղեցի ի վաղնջուց ժամա-նակաց հաստատեալ որպէս գաղութ ժո-ղովորդեանս անգիտելի է մեզ՝ թէ ե՞րբ և ո՞րք ոմանք էին որ նախ զառաջինն եկեալ իցեն ալսր: Խոյնալէս և սորա ակզքնատո-րութիւն յորո՞ւմ ժամանակի եղև, և որո՞ց ձեռք հիմնարկին... Են որ ասնն իբր թէ ի գաղթականութենէ Անուշ հատուած եկեալ իցէ ալսր և ալսուր, սակայն յաներկբայ եմք թէ յառաջագոյն քան զգաղթականու-թիւնս զայսոսիկ գտանէին մարդիկ աստ անշուշտ յազգէ մերմէ եկեալ: Եւ յաղագս վերջին նորոգութեանս թուականին որ եղև յամի Տեառն 1832, զուպարան վկայեն վեմ-քարանցն յիշատակարանք որ ընդ սեղանովք սրբոց երից խորանաց երկաթ-եալ երկրագիծի դրանցն արձանագրութիւնք և արքունի հրովարտակն.

«ՄԻ ԴՈՒ ԶԵՐՈՎԱ ՍՐՈՎ ԲՈՑԵՂԷՆ ՊԱՀԱԿԵՐ, ԶԻ ԴՈՒ ԶՄՈՒՏՍ ԱԳԻՆ ԴՐԱԽՏԻՆ ԱՐԳԵԼԵՐ, ԱՅՂ ԱՆԵՂԻՆ ԱՋՆ Ի ՅԵՐԿՆՈՒՍՏ ՇՈՎԱՆԻ՝ ՊԱՀԵՍՑԷ ՄԻՆԶ Ի ԿԱՏԱՐԱՄ ԱՇԽԱՐՀԻ»:

Առ առաջին հարստութեամբ Բուլղարաց՝ բաղմութիւնք հայոց գտանէին ի շրջաբնակ գաւառս, ոյք միաբանեալ ընդ բանակի զօրաց նոցին ընդդէմ Յունաց մեծամեծ պատերազմունս մղեցին զերապանծ յաղ-թանակաւ:

Սոֆիայի հայոց եկեղեցվո մեջն ու դուրսը կգտնվեն զերեզմանաքարեր, որոնցմէ միւլն վրա կար հետեւյալ արձանագրութիւնը.

«ՆԱՅԵՑԱՐՈՒԹ ԵՆՈՒՆԴԵ ԾԵՐԿՐԻ, Ի ՍՈՑՆ ՏԱՊԱՆՍ ՈՐ ՏԵՍԱՆԻ, ԵԳԵԱԼ ԿԱՅ ԱՍՏ Ի ՊԱՀԵՍՏԻ ՄԱՐՄԻՆ ԱՌՆ ԲԱՐԵՊԱՇՏԻ, ՍԱ ԷՐ ՅԵՐԿՐԷՆ ՆԱԽԶԸՎԱՆՑԻ ԵՒ Ի ԳԵՂԶԷՆ ՇՈՒՌԻԹԵՑԻ, ՏՈՂՈՆՑ ԱՒԵՏԻՔԻ ՈՐԴԻ ԵԱՏՈՒՐՆ՝ ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ՌՃԶԹ ՍԵՊ. ԺԸ»:

Սոֆիայի եկեղեցին, ըստ հիշատակու-թեան, կառուցված է եղեր ասկէ 450 տարի առաջ Ապրո շինքիին կողմն: Ըստ որում, ասկէ առաջ ալ հայեր կապրին եղեր հոս ալ, ինչպէս և Պլովդիւ և Պազարլըք քաղաք-ներուն մեջ:

Ռուսընկի մեջ ծնած ու մեծցած նշանա-վոր հայու մը հիշատակութիւնը կգտնվի Հովնաթանի կողմն հրատարակված գրքին մեջ, որու մասին այսպէս կրսն.

«Միրզայեան Մանուկ պէյը, որ 1808-ին պատահած դեպքերուն հետ առնչութիւն է ունեցած և որ Մոսկվայի Լազարեան ճե-մարանի մեջ դասատու Մսեր Գրիգորեանց Մսերեան 1836—1843 Միրզայեան որդոց կրօնական ուսմանը և հայկաբանութեան ուսուցիչն է եղած»:

Մանուկ Միրզայանը ծնած է եղեր Ռուս-ջուղ 1769-ին, և 1812-ին խաղաղութեան ժո-ղովին կհրավիրեն իբրև իրավարար-քաղա-քագետ, հաշտեցնելու համար ռուս և թուրք երկու կողմերը, որոնք երկու տարի պատե-րազմի մեջ են եղած, և իր ճարտարամտու-թեան շնորհիւ հաշտութիւնը կնքված և ռու-սաց կայսրեն՝ Վլադիմիրեն, ասպետութեան շքանշանով պատվւած է և 1816-ին զինքը կոչած են ժշխան հայկազնյան»:

Բ

